ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2022-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝	համայնքի ղեկավար	Դ. ՍԱՐԳՍՅԱՆ
Հաստատվել է՝	համայնքի ավագանու 07.03.2022թ.	թիվ 075 –Ն որոշմամբ

ԴԻԼԻՋԱՆ, 2022Թ
(համայնքի անվանումը)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ 4

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ 5

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ 5

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ 8

1.4 ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 9

1.5 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 10

1.6 ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ 11

1.7 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 12

1.8 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ 13

1.9 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 13

1.10 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 15

1.11 ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ 17

1.12 ԲԻԶՆԵՍ ՄԻՋԱՎԱՅՐ 20

1.13 ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 21

1.14 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ 22

1.15 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ 23

1.16 ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 24

1.17 ՀԱՄԱՅՆՔԻՆ ՎՏԱՆԳ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 24

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 25

3. ՀԱՄԱՅՆՔԻ՝ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ 26

3.1. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ 26

Հիմնահարցեր 26

3.2. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 27

3.3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 28

3.4. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 29

3.5. ՄՇԱԿՈՒՅԹ 30

Հովի. Շարամբեյանի անվան գեղարվեստի մանկական դպրոց 30

Մանկական երաժշտական դպրոց 30

Մշակույթի պալատ 31

Երկրագիտական թանգարան 32

Զբոսաշրջություն 32
3.6. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԱԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ 34
ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐ 34
3.7. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ 34
3.8. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 35
ԵԶՐԱՓԱԿՈՒՄ 42

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:

Գալիք տարիների համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները և բարձրացնել սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը,
- Բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը,
- Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, գույքային վերազինման աշխատանքներ,
- Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային-կոմունալ տնտեսության, բարեկարգման և ճանապարհային տնտեսության բնագավառներում,
- Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը,
- Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր,
- Բարձրացնել ՏԻՄ-ի կողմից մատուցվող ծառայությունների որակը, դրանց թափանցիկությունն ու հաշվետվողականությունը
- Զարգացնել ՏԻՄ-բնակիչ համագործակցությունը, մասնավորապես տեղեկատվական ու կրթական ոլորտներում

Ես դիմում եմ համայնքի բնակչությանը, ավագանուն, համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման ուղղությամբ: Համայնքի ռազմավարական պլանը մշակվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից, բնակիչների, ավագանու անդամների, հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ համատեղ, որով սահմանվում է համայնքի ֆինանսական կառավարման հիմնական քաղաքականությունը գալիք 5 տարիների համար: Այն կդառնա ուղեցույց համայնքային ծառայությունների մակարդակի և որակի պահպանման, խթանման և բարձրացման համար:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Դիլիջան խոշորացած համայնքը ընդգրկում է հետևյալ բնակավայրերը՝ Դիլիջան քաղաք, Հաղարծին գյուղ, Թեղուտ գյուղ, Գոշ գյուղ, Հովք գյուղ, Աղավնավանք գյուղ, Խաչարձան գյուղ: Դիլիջան համայնքը գտնվում է Տավուշի մարզի հարավարևմտյան մասում: Համայնքը հյուսիսից և արևելքից 7277մ հատվածով սահմանակից է Ծաղկավան համայնքին, արևելքից 6806մ հատվածով՝ Սեւքար համայնքին, 7843մ հատվածով՝ Ենոքավան, 454մ հատվածով՝ Գետահովիտ, 24569մ հատվածով՝ Գանձաքար, 2107մ հատվածով՝ Իծաքար, արեւելքից 5610մ հատվածով՝ Նավուր համայնքներին, հարավից Գեղարքունիքի մարզին, հարավ-արեւմուտքից՝ Կոտայքի մարզին, արեւմուտքից՝ Լոռու մարզին:

Դիլիջան առողջարանային քաղաքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելյան մասում Աղստև գետի հովտում, ծովի մակերևույթից 1100-1510 մետր բարձրության վրա, շրջապատված՝ Փոքր Կովկասի լեռնազանգվածներով: Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը 63316.93 հա, անտառային հողերը /ազգային պարկ/ 5355.29հա: Օդի հարաբերական խոնավությունը 70% է, տեղումների քանակը՝ 637 մմ, արևափայլի տևողությունը՝ 2091 ժամ:

Տարածքի հիմնական ջրային զարկերակը Աղստև գետն է՝ իր վտակներով, որն էլ առանձին հմայք է հաղորդում քաղաքի ընդհանուր բնապատկերին: Գետի ընդհանուր երկարությունը կազմում է 133կմ: Ամենամեծ վտակը համարվում է Գետիկը /30 կմ/: Գետակները տիպիկ լեռնային են, հոսում են ձորակներով: Բոլոր գետերի և գետակների ջրերը քաղցրահամ են: Տարածքը հարուստ է մակերևույթային ջրերով: Բոլոր ձորերի տեսք ունեցող ցածրույթներում հոսում են գետակներ, որոնց ընդհանուր քանակը հարյուրից ավելի է: Տարածքում շատ են նաև հանքային աղբյուրները, որոնցից իր արդյունաբերական նշանակությամբ աչքի է ընկնում Բլդանի աղբյուրը, որը հայտնի է՝ Դիլիջան՝ անվամբ: Այն ՀՀ ամենաարժեքավոր հանքային ջրերից մեկն է և օգտագործվում է բուժման նպատակով: Իր բնակլիմայական պայմաններով Դիլիջանը եզակի բնակավայրերից է: Քաղաքի չքնաղ բնապատկերը լրացուցիչ դրական ներգործություն է ունենում հիվանդների և հանգստացողների վրա:

Անտառի տարածքը Հայաստանի բնաշխարհի եզակի անկյուններից է, որն առանձնանում է հարուստ և յուրօրինակ կենսաբազմազանությամբ, մեզոֆիլ անտառային լանդշաֆտների, գիտական, ճանաչողական և տնտեսական բարձր արժեքներ ունեցող առանձին էկոհամակարգերի ու բնության հուշարձանների բնապահպանական, գիտա-ճանաչողական, առողջապահական և ռեկրեացիոն բարձր արժեքներով: Հյուսիս-արևելյան մասերում նրան հարում են Բազումի, արևմտյան և հարավ-արևմտյան կողմերից՝ Փամբակի, արևելքից՝ Մուրղուզի և հարավ-արևելքից՝ Արեգունի լեռները: Կիրճի լեռնային զանգվածները ծածկված են հարուստ անտառներով, որոնք վերջանալով լեռնային կատարներին, փոխարինվում են ալպյան մարգագետիններով:

Դիլիջանին բնորոշ է մեղմ, լեռնա-անտառային չափավոր զով ամառը, արևաշատ տաք ձմեռը, ամբողջ տարվա ընթացքում չոր և տաք եղանակը: Հուլիսի միջին ջերմաստիճանը +18 է, հունվարին՝ 0 ից -2: Օդի չորությունը առանձնապես արտահայտվում է ձմռան և գարնան ամիսներին: Տարածքի միջին բացարձակ բարձրությունը 1256 մետր է:

Հաղարծին գյուղը հիմնադրվել է 1815 թ.-ին: Հեռավորությունը Երևանից 110կմ է, մարզկենտրոնից՝ 23կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից 900մ.: Բնակլիմայական պայմանները. գտնվում է բարեխառն գոտում, ամառվա միջին ջերմաստիճանը +19 է, ձմռանը՝ -2: Պատմամշակութային կոթողները. Հաղարծնի վանական համալիր /10-13դդ/: Համայնքի զբաղեցրած տարածքը 2775.88հա է, որից՝ 1055.29 հա արոտներ, 157.65հա վարելահողեր: Բնակչության զբաղմունքը՝ հողագործություն, անասնապահություն:

Թեղուտ գյուղը հիմնադրվելէ 1925թ.-ին: Գյուղը առանձին բնակավայրի կարգավիճակ է ստացել ՀՀ Գերագույն խորհրդի 1993թ. Նոյեմբերի 5-ի որոշմամբ: Թեղուտից մի քանի կիլոմետր հեռավորության վրա են գտնվում Հաղարծին և Ջուխտակ վանքերը, որոնք հայկական ճարտարապետության լավագույն նմուշներից են: Հեռավորությունը Երևանից 109կմ, մարզկենտրոնից՝ 26 կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից 1040մ է: Բնակլիմայական պայմանները. գտնվում է բարեխառն գոտում, ամառվա միջին ջերմաստիճանը +19, ձմռանը՝-2: Համայնքի զբաղեցրած տարածքը 248.01 հա է որից՝ 94.31 հա արոտներ, 10.67 հա վարելահողեր: Բնակչության զբաղմունքը՝ հողագործություն, անասնապահություն:

Գոշ գյուղը հիմնվել է 1840-1845թթ.-ին: Առաջին բնակիչները եղել են նախկին Նոյեմբերյանի շրջանի Դոստլու (այժմ՝ Բարեկամավան) և Կոթի գյուղերից վերաբնակեցվածները: Որպես հին բնակատեղի հիշվում է դեռևս 10-11-րդ դարերից: 1178թ. Կառուցվել է Գոշավանքի վանական համալիրը: Այն կառուցվել է Մխիթար Գոշի կողմից՝ Իվանե Զաքարյան իշխանի աջակցությամբ: Գոշավանքը եղել է միջնադարյան Հայաստանի հոգևոր և մշակութային խոշոր կենտրոններից մեկը, որտեղ ստեղծվել և պահպանվել են բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր: Այստեղ են ուսում առել և գործել Վանական վարդապետը և Կիրակոս Գանձակեցին: Գոշավանքը եղել և մնում է համաշխարհային պատմամշակութային կենտրոններից մեկը: Հեռավորությունը Երևանից 118կմ է, մարզկենտրոնից՝ 24կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից 1270 մ.: Բնակլիմայական պայմանները. գտնվում է բարեխառն գոտում, ամառվա միջին ջերմաստիճանը + 19, ձմռանը՝ -2: Համայնքի զբաղեցրած տարածքը 9012.06 հա, որից՝ 4457.94հա արոտներ, 475.38 հա խոտհարք, 185.16 հա վարելահողեր: Բնակչության զբաղմունքը՝ հողագործություն, անասնապահություն:

Հովք գյուղն ամբողջապես եղել է ադրբեջանաբնակ, ադրբեջանցիների գաղթելուց հետո՝ 1989թ-ից այն բնակեցվել է փախստականներով և ՀՀ տարբեր բնակավայրերի բնակիչներով: Հովք գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևմտյան մասում, Իջևան Դիլիջան քաղաքների միջնամասում, ծովի մակարդակից բարձր է 800-ից 1200մ, հեռավորությունը պետական սահմանից կազմում է 40կմ: Ունի խիստ տարբերվող լեռնային ռելիեֆ, հարուստ է բնական անտառներով: Հովք գյուղի վարչական տարածքը կազմում է 5406,3հա, կլիման մեղմ է, բարեխառն, ձմռանը համեմատաբար տաք է: Հունվարի միջին ջերմաստիճանը -8 է, հուլիսին՝ + 25: Նվազագույն ջերմաստիճանը -30 է, առավելագույնը՝ +35: Հաճախակի են չորային, երաշտի տարիները, որից շատ է տուժում գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացին: Տարածքով անցնում է Աղստև գետը: Համայնքը գազաֆիկացված է:

Աղավնավանք գյուղը մինչև 1988թ. բնակեցված է եղել ադրբեջանցիներով և կոչվել է Սալահ: Հետագայում այստեղ վերաբնակեցվել են Ադրբեջանից բռնագաղթված մեր հայրենակիցները: Կան հավաստի պատմական տվյալներ, որ մինչև մոնղոլ-թաթարական արշավանքները այս տարածքը ևս բնակեցված է եղել հայերով, որի վառ ապացույցներն են

միջնադարյան եկեղեցին, խաչքարերն ու այլ շինություններ: Այստեղ 12-րդ դարում կառուցվել է Սուրբ Աստվածածին եկեղեցին՝ իր օժանդակ կառույցներով: Այն ծառայել է նաև որպես ճգնարան: Եկեղեցին ունի նաև 2-րդ անվանումը՝ Ախնաբաթ կամ Հախնաբաթ: Գյուղը գտնվում է Նոր Գետիկի ափին և ունի շատ նպաստավոր պայմաններ տուրիզմի զարգացման համար: Հեռավորությունը Երևանից՝ 130 կմ է, մարզկենտրոնից՝ 29 կմ, ՀՀ պետականսահմանից՝ 42կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1100մ: Բնակլիմայական պայմանները՝գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը + 19 է, ձմռանը՝ -3: Համայնքի զբաղեցրած տարածքը՝ 6887.91հա, որից՝ 2026.75հա արոտներ, 102.76հա վարելահողեր: Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, անասնապահություն:

Խաչարձան գյուղը մինչև ազգամիջյան կռիվները կոչվել է Փոլադ և բնակեցված է եղել ադրբեջանցիներով: Փոլադի տնտեսության հետ միևնույն վարչական տարածքում են գտնվել Աղքիլիսա և Մուրթել փոքր գյուղերը, որոնք նույնպես ադրբեջանաբնակ են եղել: 1989թ. Տարածքը բնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթված հայերով, որից հետո այն անվանվել է Խաչարձան: Նախկին Մուրթել գյուղը ադրբեջանցիների հեռանալուց հետո բնակեցվել է Շահումյանի Շրջանից բռնագաղթվածներով և վերանվանվել Գեղատափ: Այժմ այստեղ բնակվում են մի քանի ընտանիքներ, որոնք զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ: Համայնքն ունի տուրիզմի զարգացման համար լավագույն բնակլիմայական պայմաններ: Հեռավորությունը Երևանից 124կմ է, մարզկենտրոնից՝ 26 կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից 1088մ: Բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամառվա միջին ջերմաստիճանը +20, ձմռանը՝ -2: Համայնքի զբաղեցրած տարածքը 5625.25հա է, որից՝ 403.30հա արոտներ, 152.04հա վարելահողեր: Բնակչության զբաղմունքը՝ հողագործություն, անասնապահություն:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչության թիվը կազմում է 27.379 մարդ, որոնցից տղամարդիկ կազմում են 47.4 տոկոսը:

Համայնքի բնակչությունը.

	Տարիքային խմբեր	Ընդամենը	Արական	Իգական
1	0-5 տարեկան	1127	541	586
2	6-19 տարեկան	4423	2310	2113
3	20-64 տարեկան	17341	8379	8962
4	64 տարեկանից ավել	4488	1767	2721
	Ընդամենը	**27379**	**12997**	**14382**

Բնակչության սոցիալական կազմը

Սոցիալական կազմը	Քանակը
Կանայք	14382
Տղամարդիկ	12997
Թոշակառուներ	4488
Փախստականներ	782
Գործազուրկներ	1583
Փարոս ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ	654
Աշխատանք փնտրող անձ	1986
Սոցիալական նպաստ ստացող ընտանիք	306
Անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիք	1450

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

2021թ. Հոկտեմբերի 17-ին Դիլիջանում առաջին անգամ կայացան ՏԻՄ համամասնական ընտրություններ: Ընտրվեց համայնքի ղեկավար և համայնքի ավագանի: Ավագանին բաղկացած է 21 անդամներից: Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը ներկայացված է թիվ 1 հավելվածով:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների հաստիքների թիվը հետևյալն է՝

1. Համայնքի ղեկավարի աշխատակազմ 72
2. Թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ 30
3. Թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ 31
4. Թիվ 3 մանկապարտեզ ՀՈԱԿ 30
5. Թիվ 4 մանկապարտեզ ՀՈԱԿ 24
6. Թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ 11
7. Թիվ 6 մանկապարտեզ ՀՈԱԿ 13
8. Հաղարծնի մանկապարտեզ ՀՈԱԿ 26
9. Թեղուտի մանկապարտեզ ՀՈԱԿ 18
10. Գրադարանների կենտրոնացված համակարգ ՀՈԱԿ 25
11. Մշակույթի պալատ ՀՈԱԿ 15
12. Երաժշտական դպրոց ՀՈԱԿ 39
13. Դիլիջանի Հ. Շարամբեյանի անվան գեղարվեստի մանկական դպրոց ՀՈԱԿ 25
14. Մարզահամալիր ՀՈԱԿ 19
15. Երկրագիտական թանգարան ՀՈԱԿ 18
16. Դիլիջանի բնակարանային տնտեսություն ՀՈԱԿ 9
17. Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում ՀՈԱԿ 50

1.4 ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Դիլիջան համայնքում գրանցված ձեռնարկությունները և անհատ ձեռնարկատերերը ըստ գործունեության ոլորտների

Գործունեություն	**Իրավաբանական անձիք, Ձեռնարկություններ**	**Անհատ ձեռնարկատերեր**
Գյուղատնտեսություն	10	3
Ձկնորսություն	4	1
Լեռնահանքային արդյունաբերություն	2	
Վերամշակող արդյունաբերություն	64	24
Էլեկտրաէներգիա, գազ, ջրամատակարարում	3	
Շինարարություն	16	3
Առևտուր, մեքենաների, կենցաղային սարքավորումների նորոգում	230	359
Հյուրանոցներ, ռեստորաններ	105	
Տրանսպորտ և կապ	12	17
Անշարժ գույքի գործակալություններ	7	7
Առողջապահութուն և սոց.ծառայություն	9	2
Կոմունալ	16	3
Ընդամենը	**478**	**419**

Համայնքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը: Դրանց մեջ առանձնանում է կաթնամթերքի վերամշակմամբ զբաղվող «Դիլի» ՍՊԸ-ն, որն անասնապահական համալիր լինելուց բացի, զբաղվում է նաև պանրի արտադրությամբ: «Դիլի»-ն ավանդական պանրատեսակներից բացի, արտադրում է նաև իտալական մոցարելլա, որոնք բոլորը պահանջված մթերքներ են Հայաստանում:

Մեկ այլ մասշտաբային տեղական արտադրություն է կազմակերպում «ԱԿՈԼ» ՍՊԸ-ն, որը ՀՆՁԱՆ ապրանքանիշի ներքո արտադրում է մրգային օղիներ ու առանց հավելումների խնձորի բնական հյութ:

Դարերի ավանդույթ ունի փայտամշակումը: Կան մանր ու միջին ձեռնարկատերեր, որոնք արժեքավոր ծառատեսակներից պատրաստում են զանազան շինանյութեր, գյուղատնտեսական գործիքներ, կենցաղային գործիքներ:

Քարի վերամշակումը նույնպես ավանդական ճյուղ է, քանի որ կան տարբեր հանքավայրեր՝ քարերի բազմաթիվ տեսակներով: Տնտեսության բարելավման հետ միասին զարգանում է նաև այդ արտադրատեսակը:

Աստիճանաբար աշխուժանում են նաև սպասարկման ոլորտի հաստատությունները: Գործում են Արդշինբանկի, ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկի, ՎՏԲ բանկի, Կոնվերս բանկի, Արարատ բանկի, Ամերիա բանկի, Հայբիզնես բանկի մասնաճյուղերը՝ իրականացնելով ամենատարբեր ֆինանսական ծառայություններ:

Ռեստորանները, խանութները զգալի թիվ են կազմում, որոնք աստիճանաբար առավել բարետես ու հարմարավետ են դառնում և իրականացնում են որակյալ սպասարկում: Համայնքում կան նաև առանձնատուն-հյուրատներ՝ հագեցած անհրաժեշտ պայմաններով, որոնք արդեն մի քանի տարի է ընդունում են զբոսաշրջիկներ արտերկրից, հանրապետության այլ բնակավայրերից: Տարեցտարի ավելանում է ընտանեկան տուրիզմով զբաղվող ձեռներեցների թիվը: Համանքում ստեղծվել է նաև տուրիզմի զարգացման տեղեկատվական կենտրոն:

Համայնքի բնակչությունն ըստ զբաղվածության բաժանվում է մի քանի խմբի՝ մանր և միջին առևտրով զբաղվողներ, պետական և տեղական ինքնակառավարման կառուցվածքներում աշխատողներ, գործազուրկներ, սեզոնային շինարարություններում աշխատողներ, սպասարկման ոլորտում աշխատողներ, որոնք մոտավորապես կազմում են բնակչության 35-40%-ը:

1.5 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում բազմաբնակարան շենքերի թիվը կազմում է 105, որից 81-ը քարե, 15-ը՝ պանելային, 9-ը՝ մոնոլիտ: Բազմաբնակարան շենքերից 49-ը ունեն թեք տանիք, 56-ը՝ հարթ: Բազմաբնակարան շենքերի բնակարանների շուրջ 95 տոկոսը ներկայումս սեփականաշնորհված է: Բազմաբնակարան շենքերում բնակվող 2800 ընտանիքներից շուրջ 233-ը ընգրկված են ՀՀ-ի աղքատության ընտանեկան նպաստի համակարգում: Համայնքի բնակֆոնդի ընդհանուր մակերեսը 390.9 հազ. քմ է, որից բնակելի մակերեսը կազմում է 285.3 հազ քմ: 2753 բնակարաններից 2635-ը սեփականաշնորհված են, մնացածը՝ 118-ը համայնքային: Վերջին 20 տարում համայնքում բնակարանաշինություն չի իրականացվել և սկսած 90-ական թվականներից գնալով քաղաքում աճել է բնակարանի

կարիք ունեցող ընտանիքների թիվը: Այն հիմնականում պայմանավորված է քաղաքի զարգացման, բնական աճի և աշխատանք որոնող մարդկանց ներհոսքի հետ: Ներկա պահին քաղաքում բնակարանային կարիք ունեցող ընտանիքների թիվը գերազանցում է 500-ը: Նրանց մեծ մասը՝ հատկապես երիտասարդ ընտանիքները, բնակվում են վարձակալությամբ: Համայնքում առկա են 8200-ից ավել առանձնատներ: Բնակարանով անապահով և կարիքավոր ընտանիքների թիվը 750-ից ավելի է, որը տարեցտարի ավելանում է: Երկրաշարժից հետո առաջացել են բազմաթիվ վթարային տներ, որոնք ֆինանսական միջոցների բացակայության պատճառով չեն վերանորոգվում:

1.6 ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը 63316.93 հա, այդթվում՝

Հողերի տեսակը	Միավորը /հա/
Բնակավայրերի փաստացի սահմաններում ընդգրկված	1766.59
Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	135.94
Էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ ենթակառուցվածքների	134.51
Հատուկ պահպանվող տարածքների	32135.71
Հատուկ նշանակության	58.40
Գյուղատնտեսական նշանակության	23567.03
Անտառային /ազգայինպարկ/	5355.29
Ջրային	163.46

Անտառային գոտում գերակշռում են անտառային շականագույն հողերը, դրանք աչքի են ընկնում հզորությամբ և հորիզոնների լավ դիֆերենցվածությամբ: Կարբոնատներով հարուստ ապարների վրա զարգացած են հողերը, որոնք տափաստանացված շականակագույն հողերի հետ միասին մոզայիկ հանդիպում են ողջ անտառային գոտում: Ենթալպյան գոտում զարգացած են լեռնամարգագետնային սևահողերը: Այնտեղ որտեղ տարածքը էրոզացված չէ, հողերը աչքի են ընկնում հզոր հումուսային շերտով՝ մինչև 40 սմ: Անտառները հիմնականում ունեն բնական ծագում: Երկրաբանական կառուցվածքը բարդ ու բազմազան է: Այստեղ հանդիպում են գրեթե բոլոր երկրաբանական ժամանակաշրջանների ապարներ: Սակայն առավել տարածված են յուրայի, վերին կավճի, էոցենի, օլիգոցե-միոցենի ու չորրորդական հասակի ապարների գոյացումներ: Տարածքում կան մետաղային և ոչ մետաղային բազմաթիվ և բազմատեսակ հանքավայրեր: Օրինակ. մետաղներից՝ ծարիրի, պղնձի, գունավոր ու թանկարժեք այլ տարրերի,երկաթի ու

մանգանի հանքավայրեր, իսկ ոչ մետաղային հանածոներից՝ կրաքար, ավազ, դոլոմիտ, խիճ, գլաքար, կավ, պորֆիրիտ, ավազաքար և այլ շինանյութերի հանքավայրեր:

Դիլիջան քաղաքային համայնքը և նրան հարող տարածքն աչքի է ընկնում գեղատեսիլ լանդշաֆտով, նշանակալից ռեկրեացիոն ռեսուրսներով, եզակի պատմաճարտարապետական հուշարձանների առկայությամբ:

1.7 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բնակչության 10-15%-ը զբաղվում է գյուղատնտեսությամբ:
Գյուղատնտեսական նշանակության հողերը բաշխված են հետևյալ կերպ՝ .

Տեսակ	հա
Խոտհարքներ	1201.85
Արոտավայրեր	19629.25
Վարելահողեր	1189.49
Այլհողատեսքեր	1543.15

Գտնվելով խոնավ կլիմայական պայմաններում, հողերը չեն ոռոգվում, բնականից հարուստ չեն հումուսով: Պտղատու այգիները տնամերձ են և կազմում են 249 հա: Բերքատվությունը բարձր չէ՝ ոչ բարենպաստ կլիմայական գործոնների պատճառով: Հաղարծին գյուղում տնտեսությունները հիմնականում զբաղվում են եգիպտացորենի և կարտոֆիլի արտադրությամբ և անասնապահությամբ: Ոռոգման ջրի բացակայությունը դժվարացնում է գյուղատնտեսական մթերքների արտադրության կազմակերպումը: **Դիլիջանում** անասնաբուծության հիմնական ճյուղը խոշոր եղջերավորներն են՝ 997, որից կով՝ 530 գլուխ, խոզ՝ 241, որից մայր՝ 47, ոչխար՝ 50, որից մաքի՝ 30, թռչունների թիվը՝ 1175, որից հավ՝ 732, ձի՝ 56 և 610 մեղվաընտանիք: **Հովք** գյուղում բնակչությունը հիմնականում զբաղված է գյուղատնտեսական աշխատանքներով: Հիմնական զբաղմունքը անասնաբուծությունն է՝ 629 գլուխ, որից կովեր՝ 281 գլուխ, խոզ՝ 17, որից մայր՝ 12, ոչխար՝ 147, որից մաքի՝ 106, այծ՝ 11, որից մայր՝ 6, թռչունների թիվը՝ 610, որից հավ՝ 495, ձի՝ 212: : Գյուղում տարածված է նաև մեղվապահությունը՝ 155 մեղվաընտանիք: **Աղավնավանք** գյուղում խոշոր եղջերավորներ՝ 186, որից 73 կով, խոզ՝ 132, որից մայր՝ 30, ոչխար՝ 156, որից 133 մաքի.այծ՝ 21, որից մայր՝ 18, թռչուններ 782, որից հավ՝ 629, ձի՝ 6 և 225 մեղվաընտանիք: **Խաչարձան** գյուղում խոշոր եղջերավորներ՝ 308, որից 167 կով, խոզ 107, որից 27 մայր, ոչխար՝ 4, այծ՝ 10, որից 7 մայր, թռչունների թիվը՝ 690, որից 579 հավ, ձի՝ 20 և 443 մեղվաընտանիք: **Գոշ** գյուղում խոշոր եղջերավոր 416, որից 211 կով, խոզ՝ 83, որից 25 մայր, ոչխար՝ 50, որից 50 մաքի, 488 թռչուն, որից 407 հավ, ձի՝ 9 և 34 մեղվաընտանիք: **Թեղուտ** գյուղում 540 խոշոր եղջերավոր, որից 288 կով, խոզ՝ 561, որից 101 մայր, ոչխար՝ 113, որից 113 մաքի, 1863 թռչուն, որից 1089 հավ, ձի՝ 38 և 128 մեղվաընտանիք: **Հաղարծին** գյուղում 1672 խոշոր եղջերավոր , որից 766 կով, խոզ՝ 242, որից 25 մայր, ոչխար՝ 323, որից 276 մաքի, 158 այծ, որից 83 մայր, 2147 թռչուն, որից 1634 հավ, ձի՝ 240 և 141 մեղվաընտանիք: Անասնապահությամբ զբաղվողները արտադրում են կաթ, միս, բուրդ, մեղր: Գյուղերում ոռոգման ջրի բացակայության պատճառով

դժվարանում է գյուղմթերքների արտադրության կազմակերպումը: Տնտեսությունները հիմնականում զբաղվում են եգիպտացորենի ու կարտոֆիլի արտադրությամբ և անասնապահությամբ:

1.8 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Դիլիջանի օդի աղտոտվածությունը չի գերազանցում նորմատիվային մակարդակը: Դիլիջան համայնքի հիմնական գետը Աղստևն է: Գետն աղտոտվում է արտադրական և կենցաղային հոսքաջրերով, որոնք գետ են թափվում առանց մաքրման կոյուղուցանցով և անկազմակերպ ջրնետքերով: Հոսքաջրերի մաքրման կայանը ներկայումս չի աշխատում: Շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցություն են գործում համայնքի թափոնները, որոնք պահեստավորվում են Հաղարծին գյուղի մոտ գտնվող աղբավայրում: Թափոնների տարեկան ծավալը կազմում է շուրջ 5.4 հազ. խոր.մ: Թեղուտ, Հովք, Խաչարձան, Աղավնավանք, Հաղարծին, Գոշ գյուղերում աղբահանությունը կազմակերպվում է և աղբը տեղափոխվում կենտրոնացված աղբավայր: Չնայած համայնքի կանաչապատվածության ընդհանուր բարձր աստիճանի, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներով /զբոսայգիներ,պուրակներ/ բնակչության ապահովվածությունը ցածր է: Հատուկ նշանակության կանաչ տարածքների զգալի մասը կարիք ունեն մեծածավալ վերականգնողական միջոցառումների:

1.9 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշխարհագրական դիրքի պատճառով Դիլիջանը սփռված է թեք լանջերի վրա և փողոցները կառուցված են կրող հենապատերով: Այն կազմում է շուրջ 89792 խմ ծավալ: Քաղաքում ունենք 22 կամուրջներ: Դիլիջան համայնքն ունի համայնքային ենթակայության 461.4 հազ. քառ. մետր մակերեսով փողոցներ և ճանապարհներ: Համայնքում մեծ ծավալի շինարարական աշխատանքներ են իրականացվում բարեկարգման, կենտրոնական հատվածի ճարտարապետական ամբողջական ձևավորման ուղղությամբ: Այդ աշխատանքներն իրականացվում են քաղաքաշինության պահանջներին համապատասխան, առավելագույնս հաշվի առնելով առողջարանային քաղաքի առանձնահատկությունները և պատմական միջավայրի պահպանման կարևորությունը:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ համատեղ 2000-ականների սկզբին համայնքում իրականացվել են ծրագրեր, որում նշանակալի է քաղաքի ներդրումը: Համատեղ իրականացվել է լճափից մինչև հրապարակ ընկած տարածքի ճարտարապետական ձևավորում, մայթերի դեկորատիվ պարապետի կառուցում, «Առյուծների աստիճանների» և դրան հարակից այգու վերակառուցման աշխատանքներ, Իզմիրյան բարեգործական հիմնադրամի աջակցությամբ Մյասնիկյան փողոցի կենտրոնական հատվածի բարեկարգման ծրագիրը՝ համապատասխան ճարտարապետական ձևավորմամբ և քանդակային էլեմենտների տեղադրմամբ: Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը՝ ի դեմս ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության, Միավորված Ազգերի Զարգացման Ծրագիրը, «Կոկա-Կոլա» կորպորացիայի Եվրասիայի և Մերձավոր Արևելքի բաժանմունքը և Դիլիջանի քաղաքապետարանը համատեղ քաղաքի

էկոհամակարգը բարելավելու նպատակով իրականացրել են հոսքաջրերի մաքրման կայանի կառուցման աշխատանքներ Աղստև գետի վրա: Ավարտվում է լուսավորության ցանցի վերականգնումը: Վերականգնվել է Այգեստան փողոցի, Ուսանողական փողոցի նրբանցքների, Մյասնիկյան փողոցի 1-ին նրբ. և Կալինինի փողոցի 2-րդ փակուղու փողոցային լուսավորության համակարգը: Վերակառուցվել է Հովսեփյան փողոցի վերջնահատվածի փողոցային լուսավորության համակարգը: Ձեռք են բերվել և տեղադրվել կախովի լուսարձակներ և սյուներին ամրացվող լուսարձակներ: «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ» միջազգային կազմակերպության հետ համատեղ բազմաթիվ լուսավորության սյան լուսատուներ փոխարինվել են էներգախնայողական լուսատուներով: Անդրանիկի թաղամասի որոշ հատվածներում կատարվել է փողոցային լուսավորության ցանցի վերակառուցման աշխատանքներ: Աղավնավանք և Խաչարձան գյուղական բնակավայրերի որոշ հատվածներում կառուցվել են փողոցային լուսավորության նոր ցանց: Վերանորոգվել են համայնքային և ներհամայնքային նշանակության ճանապարհներ:

Ներհամայնքային նշանակության փողոցներում կատարվել է ճանապարհային նշանների տեղադրում, փողոցների և հետիոտնի համար նախատեսված անցումների նշագծում: Քաղաքի տարբեր հատվածների ավտոտրանսպորտի երթևեկելի մասում տեղադրվել են տարբերանշաններ: Տեղադրվել են ճանապարհային նշաններ, կատարվել է փողոցների նշագծում: Իրականացվել է ներքաղաքային ուղևորատար ավտոտրանսպորտի կանգառների վերանորոգում: Կատարվել է քաղաքի կանգառների արդիականացման և վերակառուցման աշխատանքներ: Կանգառներում տեղադրվել են նոր նստարաններ: Իրականացվել է հնգաթև հուշարձանի և օղակաձև խաչմերուկի հարակից տարածքների բարեկարգում և ճարտարապետական ձևավորում: Նորոգվել են համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքներ, կոյուղագծեր, շքամուտքերը, փոխվել են պատուհանները և դռները: Վերակառուցվել են որոշ շենքերի աստիճանավանդակները:Վերականգնվել է մի շարք բազմաբնակարան շենքերի վերելակները: Իրականացվել է երկրաշարժից վթարված Հովսեփյան 83 շենքի ամրացման աշխատանքներ: Փլված հենապատերի վերակառուցման զգալի աշխատանքներ են կատարվել: ՎՀԱ-ի ծրագրի շրջանակներում և համայնքի ներդրմամբ իրականացվել է փլված խախտված հենապատերի, հեղեղատարների և եզրաքարերի վերանորոգման օժանդակ աշխատանքներ: Բակերում կառուցվել են խաղահրապարակներ, տեղադրվել են զրուցատաղավարներ: Զգալի աշխատանքներ են իրակնացվել աղբահանության և սանիտարական մաքրման բարելավման՝ առողջարանային քաղաքին վայել կազմակերպելու ուղղությամբ:

ԱՄՆ-ի Միջազգային Զարգացման Գործակալության կողմից ֆինանսավորվող «Ռիսըրչ Թրայանգլ Ինստիտուտ» Ոչ առևտրային կորպորացիայի Հայաստանյան մասնաճյուղի հետ համատեղ ներդրմամբ ձեռք է բերվել ճանապարհները մաքրող, ջրող մեքենա: Քաղաքի տարբեր հատվածներում կառուցվել և ցանկապատվել են աղբահավաք կետեր, ձեռք են բերվել և տեղադրվել աղբարկղներ: Դիլիջան քաղաքում ջրամատակարարումն իրականացվում է բաց աղբյուրներից՝ ջրի մաքրման կայանների (ՋՄԿ) միջոցով: Դիլիջան քաղաքի ջրամատակարարումն իրականացվումէ 3 ՋՄԿ-ների՝ Գոլովինոյի, Բլդանի և Ֆրոլովի բալկայի կայանների միջոցով, որոնց նախագծային հզորությունը 140 լ/վրկ է: Ջրամատակարարման արտաքին ցանցն ունի 16կմ երկարություն, ներքին ցանցը՝ 101կմ:

Դիլիջանի համայնքապետարանը Իտալիայի Տոսկանայի «Չիսպել» հանրային տրանսպորտային ասոցիացիայի հետ Եվրոմիության կողմից ֆինանսավորած «Հաջորդ կանգառը՝ Եվրոպա» ծրագրի շրջանակներում ստեղծեց որակապես նոր՝ «Դիլիջանի հասարակական տրանսպորտային համակարգ»: Ծրագրի իրականացումը միտված էր միջհամայնքային տեղաշարժի դյուրինացմանը: Ծրագրի շրջանակներում մշակվել ու գործարկվել են 3 համայնքային ու 1 միջհամայնքային ուղիներ, որը ներառում է նաև խոշորացված համայնքի բնակավայրերը: Ծրագրով ձեռք են բերվել թվով 5 Mercedec մակնիշի միկրոավտոբուսներ, որոնք էլ սպասարկում են քաղաքի հասարակական տրանսպորտը: Դիլիջանի հասարակական տրանսպորտն ունի առանձնացող բրենդինգ, առկա է տրանսպորտային ուղիների քարտեզ, որն իր տեսակով միակն է Հայաստանում:

Քաղաքն ունի 6825 գծամետր ընդհանուր երկարությամբ ջրահեռացման ուղի, որը ըստ փողոցների հետևյալ պատկերն ունի.

Փողոցի անվանում	**Ջրահեռացման ցանց**	
	Գծամետր	**Դիտահոր (հատ)**
Շահումյան	1600	20
Շահումյան 1-ին նրբանցք	150	4
Գայի	200	8
ՈՒսանողական	260	11
Մյասնիկյան	1000	16
Հակոբջանյան	900	13
Օրջոնիկիձե	100	4
26 Կոմիսարների	100	4
Կամո	2250	43
Իվանովի	265	10
ԸՆԴԱՄԵՆԸ	***6825***	***133***

Խաչարձան, Հաղարծին, Թեղուտ, Աղավնավանք, Գոշ, Հովք գյուղերում համայնքային ենթակայության ճանապարհները ամբողջությամբ բնահողային են, որոնք ունեն վերանորոգման կարիք: Գյուղերում բացակայում է կոյուղու համակարգը:

1.10 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Տվյալներ կրթական օջախների վերաբերյալ

Կրթականօջախներ	**Քանակը**	**Սովորողներիթիվը**	**Աշխատողներիթիվը**
Միջնակարգ, հանրակրթական դպրոցներ	12	2930	479
Դիլիջանի Կենտրոնական Դպրոց (ԴԿԴ)	1	133	70
Միջնակարգ մասնագիտական /Քոլեջներ/	3	478	137
ԲՈՒՀ /Գեղարվեստի Ակադեմիայի մ/ճ/	1	21	12

Մանկական Երաժշտական դպրոց	1	78	39
Գեղարվեստի մանկական դպրոց	1	120	25

Տվյալներ նախադպրոցական կազմակերպությունների մասին.

Կազմակերպության անվանումը	**Ստեղծման տարին**	**Երեխաների թիվը**	**Աշխատողների թիվը**
«Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ	1970	137	30
«Դիլիջանի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ	1978	103	31
«Դիլիջանի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ	1975	98	30
«Դիլիջանի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ	1981	73	24
«Դիլիջանի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ	1960	17	11
«Դիլիջանի թիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ	1950	27	13
Հաղարծնի մանկապարտեզ	1967	78	26
Թեղուտի մանկապարտեզ	2014	42	18

Դիլիջան համայնքում գործող համայնքային ենթակայության նախադպրոցական 8 ոչ առևտրային կազմակերպություններից 6-ը տեղավորված են տիպային շենքերում, 2-ը՝ հարմարեցված: Համայնքում կա նախադպրոցական հասակի 1127 երեխա, որոնցից մանկապարտեզ են հաճախում 575-ը: Մանկապարտեզներից 7-ը ունեն լոկալ ջեռուցման համակարգ: Խաչարձան և Հովք գյուղական բնակավայրերում ստեղծվել են մոբայլ մանկապարտեզներ:

Մանկական երաժշտական դպրոցում գործում են դաշնամուրի, ջութակի, թառի, քանոնի, սրինգի, դհոլի, դուդուկի և շվիի դասարաններ, դպրոցն ամբողջությամբ գազաֆիկացված է:

Գեղարվեստի դպրոցում գործում են պարարվեստի և գեղանկարչության բաժիններ: Համայնքապետարանը միջոցներ է ձեռնարկում իր ենթակայության ենթակառուցվածքների նյութատեխնիկական բազայի ամրապնդման ուղղությամբ: «Ռոսգոսստրախ Արմենիա» ընկերության հետ համատեղ կատարվել է թիվ 5 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ: Դիլիջան համայնքի ներդրումը նշված ծրագրին կազմում է 5477.0 հազ. դրամ՝ նյութերի տեսքով: Մանկապարտեզների համար ձեռք է բերվել գույք՝ մահճակալ, սեղան, աթոռ: Մանկապարտեզներում տեղադրվել են խաղահրապարակներ և կատարվել ցանկապատի վերականգնում: Համայնքի միջոցներով 2007թ. թիվ 6 մանկապարտեզի համար ձեռք է բերվել նոր շենք: Վերանորոգվել են Թիվ 1, Թիվ 3, Թիվ 6 մանկապարտեզները: Պետական բյուջեի միջոցներով իրականացվել է նաև Թիվ 4 մանկապարտեզի մասնաշենքի վերակառուցում: Թվով 6 մանկապարտեզների համար ձեռք է բերվել գույք և սարքավորումներ: ՏԻՄ խրախուսման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Քաունթերփարթ ինթերնեյշնլի հայաստանյան կազմակերպության հետ համատեղ իրականացվել է Դիլիջանի թիվ 4 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմումէ 32167.8 հազ.դրամ: ՏԻՄ խրախուսման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Քաունթերփարթ ինթերնեյշնլի հայաստանյան կազմակերպության և Դիլիջանի զարգացման հիմնադրամի հետ համատեղ իրականացվել է «Դիլիջանի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ շենքի վերանորոգման

աշխատանքները 78286,0 հազ.դրամ ընդհանուր արժեքով: Դիլիջանի քաղաքային զբոսայգում բնակիչների ակտիվ հանգիստը առավել հարմարավետ և անվտանգ դարձնելու նպատակով ձեռք է բերվել նոր խաղային ատրակցիոններ: Համայնքի մանկապարտեզներում և գեղարվեստի դպրոցներում ներդրվել է վարձավճարների զեղչերի համակարգ: Երեխաների ընդգրկվածությունը ավելացնելու նպատակով «Դիլիջանի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ հաճախող սաները ազատված են վարձավճարից:

1.11 ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Տվյալներ մշակութային կազմակերպությունների մասին.

Կազմակերպության անվանումը	Ստեղծման տարին	Աշխատողների թիվը	Ցուցանմուշների քանակը
«Երկրագիտական թանգարան» ՀՈԱԿ	1950	18	5280

Երկրագիտական թանգարանում պահպանվում են 3000-ամյա հնագիտական իրեր, համաշխարհային նշանակություն ունեցող և ազգային արժեքներ ներկայացնող ցուցանմուշներ, որոնցից հիմնական ֆոնդն է 5280, այդ թվում գեղ.414, գծ. 358, 54 քանդակ, կիրառական դեկորատիվ արվեստի 392, հնագիտական 1020, ազգագրության 637, 742 լուսանկար. ցուցանմուշներ և 1068 այլ փաստաթղթեր և նյութեր: Թանգարանում կա աշխարահռչակ նկարիչներ Հովի. Այվազովսկու, Շիշկինի, Մ.Սարյանի, Փ.Թերլեմեզյանի, Խ.Ժերանյանի, Գառզուի, Էդ.Շահինի, Ռոքուել Քենտի, Լագորիոի, 16-19-րդ դարերի իտալական և ֆրանսիական նկարիչների ստեղծագործություններ:

Կազմակերպության անվանումը	Ստեղծման տարին	Աշխատողների թիվը	Խմբասենյակների թիվը	Դահլիճում տեղերի քանակը
«Մշակույթի պալատ» ՀՈԱԿ	1972	15	14	551

Քաղաքի մշակութային կյանքում կարևոր դերակատարում ունի մշակույթի պալատը: Նախագծային հզորությունը 2280քառ. մետր է: 2007թ. Շահագործման հանձնվեց Շամախյան թաղամասի ակումբի նոր շենքը: 2008թ. կառուցվեց ամառային ամֆիթատրոն: Հաղարծին գյուղն ունի մեկ մշակույթի տուն, որը հիմնանորոգված է, կառուցվել է կենտրոնական ջեռուցման համակարգ, ապահովված է դահլիճային փափուկ բազկաթոռներով: Խաչարձան գյուղն ունի մեկ մշակույթի տուն, որը մասնակի վերանորոգված է: Աղավնավանք գյուղում առկա է մեկ մշակույթի տուն, որը վերանորոգման կսարիք ունի: Թեղուտ գյուղում կա համայնքային կենտրոն, որը գտնվում է անմխիթար վիճակում:

Մանկական զբոսայգին ստեղծվել է 7հա տարածքով դենդրոպարկի մեջ: Տեղադրված են ատրակցիոն-կարուսելներ: Զբոսայգում գործում են նաև «Ջինիշյան հիշատակի հիմնադրամի» կողմից կառուցված մանկական խաղահրապարակը:

Կազմակերպության անվանումը	Ստեղծման տարին	Աշխատողների թիվը	Ֆոնդ /գիրք/
Դիլիջանի գրադարանների կենտրոնացված համակարգ	1908	25	239519

Հաղարծին գյուղի գրադարանը գտնվում է մշակույթի տան շենքում, ունի 14860 անուն գիրք: Խաչարձան և Աղավնավանք գյուղերի գրադարանները գտնվում են նախկին գյուղապետարանների շենքում, ունեն 3650 անուն գիրք: Թեղուտ գյուղի գրադարանը գտնվում է համայնքային կենտրոնում, որտեղ կա 7200 անուն գիրք: Գոշ գյուղի գրադարանը գտնվում է Ակումբի շենքում, որտեղ կա 10000 անուն գիրք: Հանրապետությունում գրադարանային առաջին կենտրոնացված համակարգը ստեղծվել է Դիլիջանում /փորձարարական/ 1974 թվականին: Գրադարանի գրքաֆոնդը կազմում է՝ 239519 կտոր գիրք, ընթերցողների թիվը՝ 6600:

Կազմակերպության անվանումը	Ստեղծման տարին	Աշխատողների թիվը	Մարզիկներ
«Մարզահամալիր» ՀՈԱԿ	1965	19	235

Համայնքում սպորտային կյանքը կանոնակարգում է մարզահամալիրը: Մարզահամալիրը կազմավորվել է մարզադպրոցի, մարզադաշտի և ֆուտբոլի դպրոցի հիմքի վրա՝ որպես ոչ առևտրային կազմակերպություն՝2003թ.: Մարզադպրոցը կառուցվել է 1965 թվականին: Գործում են հունահռոմեական ըմբշամարտի, ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի, ձեռքի գնդակի մարզախմբեր, որոնցում ընդգրկված են 235 մարզիկներ:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Հայաստանում և նրա սահմաններից դուրս Դիլիջանի մշակույթը ներկայացնելու գործին: Համագործակցում ենք «Հայաստանի Համայնքների Միության», «Հայաստանի ավագանիների ասոցիացիա» հասարակական կազմակերպության հետ: Փոխադարձ վստահության արդյունքում համայնքում

իրականացվել են մի շարք ծրագրեր GIZ, Քաունթերփարթ ինտերնեյշնլ հայաստանյան կազմակերպության, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ: Մի շարք մշակութային-կրթական ծրագրեր են իրականացվում Ֆրանսիայի Էքս Պրովանս և Սեն Մաքսիմե, Իտալիայի Ուդինե և Ռումինիայի Ռոմեն քույր քաղաքների հետ:

Արևելյան գործընկերության շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետությունում Չեխիայի Հանրապետության դեսպանատան նախաձեռնությամբ Դիլիջանի քաղաքապետարանում անցկացվեց ՏԻՄ-երի աշխատանքների վերաբերյալ փորձի փոխանակում: Միջոցառմանը մասնակցում էին Չեխիայի, Ուկրաինայի, Բելոռուսի, Վրաստանի, Մոլդովայի վարչատարածքային ղեկավար աշխատողներ, ոլորտը կառավարող նախարարությունների ներկայացուցիչներ, ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակիցներ:

UWC Դիլիջան քոլեջը և Դիլիջանի զարգացման հիմնադրամը իրենց գործունեությամբ մեծ ազդեցություն են համայնքի կրթամշակութային և սոցիալ-տնտեսական տարբեր ոլորտների զարգացման գործում, «Դիլիջանի զարգացման հիմնադրամի» գործունեությունը նպաստում է համայնքի զարգացման խնդիրների արագ և համակարգված լուծմանը:

Կազմակերպվել են տարբեր միջոցառումներ նվիրված հիշատակի և տոն օրերին: Արդեն տասը տարի Դիլիջան քաղաքում անց է կացվում «Արհեստների և արվեստների փառատոն Դիլիջանում» միջոցառումը, որը նախկինում կոչվում էր «Մշակութային վերածնունդ» գորգագործության և դեկորատիվ – կիրառական արվեստների ավանդական փառատոնը: 2019-ից «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ նախաձեռնությամբ կազմակերպվում է ԴիլիՏՈՆ համայնքային զարգացման փառատոնը, որը նպատակ ունի խթանել համայնքների՝ մասնավորապես Դիլիջան խոշորացված համայնքի մեջ մտնող բնակավայրերի հավասարաչափ զարգացումը, տարածաշրջանի գյուղական համայնքների բնակիչների համար ստեղծել սեփական արտադրանքի ցուցադրության, իրացման նոր հնարավորություններ, խթանել տեղացիների զբաղվածությունը, ինչպես նաև զարգացնել միջհամայնքային արհեստագործական, մշակութային կապերը: 2021-ին Դիլիջանում է կազմակերպվել նաև Գինու օրեր Դիլիջանում փառատոնը:

Դիլիջանում մեկնարկեց «Մարզային գավաթ» հեծանվային մրցաշարը, որի կազմակերպիչն էր «Սիրողական հեծանվային սպորտի և հեծանվային զբոսաշրջության ֆեդերացիա» ՀԿ-ն:

Համայնքի արվեստի դպրոցների սաները, ինքնագործ խմբերը պարբերաբար մասնակցում են տարբեր տիպի հանրապետական և միջազգային փառատոնների, ցուցահանդես մրցույթների՝արժանանալով դիպլոմների և մրցանակների:

Յուրաքանչյուր տարի կազմակերպվում են երեխաների պաշտպանության օրվան և վերջին զանգին նվիրված միջոցառումներ: Դիլիջանի համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկությունների ավագ նախադպրոցական խմբեր հաճախող երեխաների ավարտական հանդեսի միջոցառման համար յուրաքանչյուր տարի տրվում են նվերներ:

Քաղաքապետարանի աջակցությամբ Գեղարվեստի դպրոցի երեխաների ստեղծագործական աշխատանքներն ուղարկվել են «Բիշկեկ – 2011» ԱՊՀ 20-ամյակին նվիրված մանկական նկարչական և դեկորատիվ կիրառական արվեստի նմուշների միջազգային ցուցահանդես մրցույթին մասնակցելու համար: Գեղարվեստի դպրոցի

սաները մասնակցել են տարբեր միջազգային ցուցահանդես մրցույթների և արժանացել պատվոգրերի, մրցանակների, մեդալների:

Դիլիջանի երկրագիտական թանգարանում Բրիտանական խորհուրդը ներկայացրեց «Նորաձևության ճանապարհ՝ երկխոսության սահմանների խաչմերուկում» ծրագրի շրջանակում եվրոպացի և հայ մոդելավորողների ստեղծած հագուստի հավաքածուն:

«Երևանյան հեռանկարներ» փառատոնի շրջանակներում «Դիլիջան» միջազգային փառատոնի մասնակիցները հյուրընկալվեցին Դիլիջանում: Ամֆիթատրոնում անցկացվեց «Պարի տոն Դիլիջանում» հանրապետական փառատոնը:

Ամբողջովին վերածրագրավորվել են dilijancity.am ինտերնետային կայքը:

Դիլիջանի տարածքը իր բնաշխարհով և հանգստյան գոտիներով, յուրահատուկ բնական և մշակութային հուշարձաններով Հայաստանում դիտարկվում է որպես սիրված հանգստի և առողջարանային գոտի: Տարածքը հարուստ է հնէաբանական և ճարտարապետական հուշարձաններով: Տարածքում է գտնվում միջնադարյան Հայաստանի հոգևոր ու մշակույթային կենտրոն հանդիսացող Հաղարծնի վանքը՝ Դիլիջանից 12 կմ հեռավորության վրա /13-րդ դ/, Գոշավանքը՝ /12-13 դդ/, Մաթոսավանքը՝ /10-13դդ/, Ջուխտակ վանքը /11-13 դդ/, Ախնաբաթի վանքը /11-րդ դ/, Աղնաբաթի կամուրջը՝ /11-րդ դ. / և այլն: Բնության հուշարձաններից հարկ է նշել Պարզ լիճը, Պահապաններ կրաքարային ելքերը՝ Գոշ գյուղի մուտքի մոտ, Գոշի լիճը, Ֆլորովայի բալկայի ձորը, Ախնաբաթի կենու պուրակը, ոլորանների կենու անտառակը, Կարմիր քարը, Պադվալների ձորը, Ղափարի սալերը, Անագունի քարանձավները և այլն:

Վերջին տարիներին մշակութային միջավայրը հարստացել է նաև նորագույն հուշարձաններով:

1.12 ԲԻԶՆԵՍ ՄԻՋԱՎԱՅՐ

Համայնքապետարանը առանձնակի ուշադրություն է դարձնում առողջարանների և հանգստյան տների շուրջտարյա գործունեության ապահովմանը: Ներկայումս գործում են 25 առողջարաններ, հանգստյան տներ, պանսիոնատներ, հյուրատներ, որոնք աստիճանաբար առավել բարետես ու հարմարավատ են դառնում և կատարում են որակյալ սպասարկում: Տարեցտարի ավելանում է ընտանեկան տուրիզմով զբաղվող ձեռներեցների թիվը: Համայնքում ստեղծվել է նաև տուրիզմի զարգացման տեղեկատվական կենտրոն: Գնալով համայնքում ավելանում է հանգստացողների թիվը, աշխուժացում է նկատվում զբոսաշրջության ոլորտում: Նկատելիորեն աճել են մանր և միջին ձեռնարկությունները, որոնց թիվը անցնում է 350-ից: Դիլիջանը տարածաշրջանի ֆինանսական կենտրոնի վերածելու կառավարության ծրագրի իրականացման լավագույն վկայություններից է ՀՀ Կենտրոնական բանկի ուսումնահետազոտական կենտրոնը: Դիլիջան են տեղափոխվել Կենտրոնական բանկի աշխատակիցների 100-ից ավելի ընտանիքներ: Նրանց համար կառուցվել է նաև ծառայողական շենք և քոթեջային թաղամաս:

2013թ. կազմակերպվեց ֆինանսական բացօթյա ցուցահանդես, որտեղ հանրապետության բանկերը իրենց տաղավարներով ապահովում էին բնակչությանը անհրաժեշտ ֆինանսական տեղեկատվությամբ: Կենտրոնական բանկը ակտիվորեն աջակցում է համայնքի խնդիրներին: 2012թ. գործում է ՀՀ Կենտրոնական բանկի «Գիտելիք հանուն զարգացման» կենտրոնը, որտեղ ընդգրկված են շուրջ 200 դպրոցականներ և

երիտասարդներ, բացի այդ կենտրոնը կազմակերպում է բազմապիսի դասընթացներ՝ ներգրավելով ինչպես հանրապետության ԲՈՒՀ-երի դասախոսների, այնպես էլ արտասահմանցի առաջատար մասնագետների: 2015թ. ավարտվեց նաև Կենտրոնական բանկի հանգստյան տան շինարարությունը:

Դիլիջան համայնքում գործում է Դիլիջանի կենտրոնական դպրոցը :

Դիլիջան համայնքում գործում է UWC Dilijan միջազգային դպրոցը, որը բարեգործական մասնավոր նախագիծ է: Այս դպրոցը տարբեր երկրների երեխաների համար նախատեսված միջազգային մակարդակի պանսիոն-դպրոց է: Դպրոցում սովորում են 15-18 տարեկան շուրջ 220 երեխա 85 երկրներից, որոնցից մոտ 20-ը Հայաստանի քաղաքացիներ են: Դպրոցն ավարտելուց հետո շրջանավարտները ձեռք են բերում Միջազգային Բակալավրիատի դիպլոմներ: Միջազգային դպրոցը նպաստում է քաղաքի ինչպես հասարակական, այնպես էլ տնտեսական կյանքի ակտիվացմանը՝ տեղում արտադրվող գաղափարները արտահանելով ամբողջ աշխարհ և լավագույն փորձը ներդնելով Հայաստանում:

Դիլիջանում է գտնվում Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանը, որտեղ ՀՀ տարբեր մարզերից հաճախում են երեխաներ՝ ռազմական կրթություն ստանալու նպատակով:

Կենտրոնական բանկի կառուցումը մեծ խթան է հանդիսացել առևտրային բանկերի՝ իրենց մասնաճյուղերը Դիլիջանում բացելու համար: Մասնավորապես համայնքում գործող նախկին երկու բանկերի՝ Արդշինինվեստ և ՎՏԲ-Հայաստան բանկ, ներկայումս իրենց մասնաճյուղերն են բացել նաև Ամերիա, Արարատ, ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկերը, Հայբիզնեսբանկը: Ընդհանուր առմամբ նկատվել է, որ առևտրային բանկերի մասնաճյուղերի հիմնումը համայնքում՝որպես կանոն, տեղի բիզնեսներին մղում է դեպի նոր գործառնություններ, խթանում նոր բիզնեսների ստեղծմանը, ինչպես նաև առավել սերտ համագործակցությունը գործարար համայնքի հետ՝ դեպի այդ բանկերի կողմից ֆինանսավորվող նոր ծրագրերի իրականացում մի շարք բնագավառներում, ինչպիսիք են ՝ ՓՄՁ-ները, առևտրային գյուղատնտեսությունը, ծառայությունը և այլն:

2011 թվականից քաղաքում իրականացվում է հակասողանքային միջոցառումների մեծ ծրագիր, արդեն իսկ 2 փուլով իրականացվել է 927 գծամետր թունելախորշերի վերականգնման աշխատանքներ: 2016թ.-ին սկսվեց երրորդ փուլը՝ որով 537 գծամետր հակասողանքային թունել կառուցվեց, որի ավարտմամբ ստեղծվեց նաև հակասողանքային դրենաժային հուսալի համակարգ: Համայնքում իրականացվող այս խոշոր ծրագրերը բավականին աշխատատեղեր են ստեղծում շինարարական մասնագիտությունների տեր մարդկանց համար: Իսկ ծրագրերի ավարտից հետո մեծ թվով մեր համաքաղաքացիներ կարող են աշխատանք գտնել ինչպես մասնագիտական,ադմինիստրատիվ, այնպես էլ սպասարկման ոլորտի հետ կապված աշխատանքներում: Այդ նպատակով կազմակերպվում են տարբեր դասընթացներ:

Անհատ ներդնողների միջոցներով վերակառուցվել և նոր տեսք են ստացել տարիների պատմություն ունեցող հանգստյան տները, առողջարանները: Ավելացել է ընտանեկան տուրիզմով զբաղվող ձեռներեցների թիվը:

1.13 ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Աջակցություն կանանց և երեխաներին» ՀԿ
2. «Գյուղի ուժը» ՀԿ
3. «Դիլնետ-սերվիս» ՀԿ
4. «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ
5. «Դիլիջանի համայնքային կենտրոն» ՀԿ
6. «Երիտասարդական գաղափարներ» երիտասարդական ՀԿ
7. «Էկոպոլիսի» բնապահպանական կենտրոն համայնքային զարգացման համար ՀԿ
8. «Հույսի կամուրջ» ՀԿ
9. «Պատանեկան նվաճումներ» ՀԿ

Համայնքում ակտիվ գործում են հասարակական կազմակերպություններ: Նրանք գործունեություն են ծավալում ամենա տարբեր ոլորտներում՝ սոցիալական, առողջապահական, բնապահպանական, կրթական և այլն: ՀԿ-ները ակտիվ մասնակցություն ունեն համայնքի զարգացման ծրագրի ստեղծման և իրականացման աշխատանքներին: ՀԿ-ների կողմից իրականացվող շարունակական ծրագրերի արդյունքում զգալիորեն ակտիվացել է քաղաքի երիտասարդական կյանքը:
2006թ.-ից Դիլիջանում հիմնվել է Երիտասարդական Գործողությունների Ակումբը /ԵԳԱ/, որը մեծապես նպաստեց համայնքի երիտասարդական ներուժի համախմբմանն ու կազմակերպմանը:
2008-ին հիմնվել է «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ, որը համագործակցում է համայնքի իշխանությունների հետ՝ ուշադրության կենտրոնում պահելով համայնքի երիտասարդության հիմնախնդիրներն ու ծրագրեր իրականացնելով այդ խնդիրների լուծմն ուղղությամբ: «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից եղել են բազում նախաձեռնություններ, որոնք արժանացել են քաղաքապետարանի հավանությանը ու ստացել անհրաժեշտ աջակցություն՝ դրանք իրագործելու համար: Բոլոր նախաձեռնությունները նպաստել են համայնքում երիտասարդների մասնակցային գործոնի բարձրացմանը, ինչպես նաև երիտասարդների դերի կարևորությանը:
Դիլիջանում ստեղծվել է նաև Օրհուս բնապահպանական տեղեկատվական կենտրոն, որն իր ուրույն տեղն ունի համայնքում բնապահպանական կրթության կազմակերպման, հասարակության համար բնապահպանական տեղեկատվության առավել մատչելի դարձնելուն և այդ ոլորտում որոշումների կայացմանը հասարակության մասնակցության խթանմանը: Կենտրոնը նաև նպաստում է բնապահպանական հարցերում հասարակության համար թափանցիկ միջավայրի ստեղծմանը:

1.14 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

1. Անտառամերձ գոտու և տեսարժան վայրերի առկայությունը, տուրիզմի և էկոտուրիզմի զարգացման հնարավորությունները
2. Լավ կազմակերպված վարչակազմ՝ ներդրողներին օգնելու և ուղղորդելու համար
3. Միջազգային և հանրակրթական հեղինակային կառույցների առկայություն
4. Մասնագետների կրթական բարձր մակարդակ
5. Պատմամշակութային արժեքների առկայություն
6. Գազաֆիկացված համայնք

7. Համերաշխ և հյուրասեր բնակչություն
8. Հիմնական ենթակառուցվածքների, ժամանակակից պահանջներին համապատասխան հյուրանոցների և ռեստորանների առկայություն
9. Բնակչության վստահությունը Տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ
10. Բարենպաստ կլիմայական պայմաններ
11. Մատչելի աշխատուժի առկայություն
12. Համայնքի ակընհայտ զարգացում
13. Գյուղատնտեսական նշանակության հողերի առկայություն
14. Ազգային պարկ, բնական ջրերի առկայություն
15. Համայնքի աշխարհագրական դիրքը և հեռավորությունը մայրաքաղաք Երևանից
16. Հեռավորությունը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիից
17. ԽՍՀՄ տարիներից Դիլիջանի զբոսաշրջային ու առողջարանային քաղաք լինելու համբավը
18. Մեղմ ու հանգիստ բնավորությամբ բնակչությունը

1.15 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

1. Վթարային և կիսակառույց բնակելի շենքերի առկայություն
2. Գործազրկության բարձր մակարդակ
3. Երիտասարդության աշխատանքային և ժամանցային վայրերի բացակայություն
4. Երիտասարդների և մտավորականության հոսք
5. Սեյսմիկ վտանգի և սողանքների առկայություն
6. Բնակարանային շինարարության ոլորտում փորձի բացակայություն
7. Վերապատրաստված մասնագետների բացակայություն
8. Բնակարանային շինարարության հետագա զարգացման համար հեռանկարային տարածքի բացակայություն
9. Ենթակառուցվածքների անմխիթար վիճակ
10. Ճանապարհների անբարեկարգ վիճակ
11. Բնակչության անվճարունակություն
12. Ոռոգման ջրի բացակայություն
13. Բնակչության արտահոսք գյուղերից
14. Գյուղատնտեսական տեխնիկայի սակավություն
15. Տեղեկատվության տարածման մեխանիզմների և մեդիաների բացակայություն
16. Քաղաքի հատակագծի բացակայություն
17. Քաղաքի զբոսաշրջային բրենդի բացակայություն
18. Քույր քաղաքաների հետ, ինչպես նաև հեռանկարային համագործակցության ուղղությամբ աշխատանքների բացակայություն
19. Ապաստարանների բացակայություն

1.16 ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Համագործակցության շրջանակների ընդլայնում
2. Տնտեսական կյանքի աշխուժացում
3. Կրթական պոտենցիալ
4. Աշխատուժի առկայություն
5. Կառավարության տրամադրվածությունը քաղաքի զարգացման նկատմամբ
6. Եվրոինտեգրում
7. Ֆինանսական կենտրոնի վերածվելու փաստը
8. Ներդրողների հոսք
9. ՍԲ ծրագրի համար ներդրման առկայություն
10. Կրթական ծրագրի ներդրում
11. Տուրիզմի զարգացում
12. Նոր աշխատատեղերի ստեղծում
13. ՍԲ-ն որպես լուրջ հնարավորություն համայնքի համար
14. Արտերկրից տրանսֆերտների կայուն հոսք
15. Աղբի վերամշակման ծրագիր
16. Էներգոարդյունավետ տեխնոլոգիաների կիրառում
17. Բարենպաստ բնակլիմայական պայմաններ
18. Միջազգային համագործակցություն, քույր քաղաքներ
19. Միջազգային գիտակրթական համալիրի հիմնում

1.17 ՀԱՄԱՅՆՔԻՆ ՎՏԱՆԳ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Գործազրկության մակարդակի աճ
2. Հարկային պարտավորությունների կատարման վատ վիճակը
3. Բնակֆոնդի վիճակի վատթարացում
4. Սողանքային երևույթներ
5. Աշխատատեղերի պակաս
6. ՍԲ ոլորտում ներդրումների պակաս, այլընտրանքի բացակայություն
7. Եկամուտների անկայունություն
8. Բնակչության արտահոսք
9. Աղբի վերամշակման բացակայություն
10. Կանաչապատում
11. Աղբահանության խնդրի առաջացում
12. Ձմռանը տրանսպորտային խնդիր
13. Սոց. բնակարանների մշակույթի բացակայություն
14. Բուհերի բացակայություն
15. Բնակչության անտարբեր վերաբերմունքը սեփական համայնքի նկատմամբ
16. Երկրում տիրող պատերազմական անկայուն վիճակը

17. Ճգնաժամային իրավիճակները, ինչպիսին ՔՈՎԻԴ համավարակն է

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համայնքի առաքելությունն է ապահովել առողջ և անվտանգ շրջակա միջավայր, որակյալ ծառայություններ մատուցել համայնքի բնակչությանը և զբոսաշրջիկներին, ապահովել համայնքի բնականոն զարգացումը, Դիլիջանը դարձնել բարեկեցիկ և մրցունակ ներդրումների համար: Համայնքի ռազմավարական նպատակն է՝ բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով և կանաչ տնտեսության սկզբունքները ներդնելով, ապահովել քաղաքի կայուն զարգացումը, այն դարձնել տարածաշրջանային ֆինանսական, կրթական և զբոսաշրջության կենտրոն:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի հիմնական նպատակներն են՝

1. Դիլիջան համայնքի տարածքային համաչափ, կայուն զարգացումը և պլանավորումը
2. Դիլիջան համայնքի շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների պլանի կազմումը
3. Բնակչության կենսական շահերի ապահովումը
4. Քաղաքային տնտեսության բոլոր ոլորտների՝ ժամանակի պահանջներին համահունչ զարգացման պահովումը
5. Բարեկարգ և հարմարավետ միջավայրի ապահովումը՝ ինչպես Դիլիջանի բնակիչների, այնպես էլ զբոսաշրջիկների համար
6. Հանգստի գոտիների ստեղծումը, կանաչ տարածքների պահպանումն ու ավելացումը, շենքերի և բակային տարածքների բարեկարգումը, ժամանակակից չափանիշներին համապատասխան արտաքին ձևավորումը, հարմարավետ և անվտանգ տեղաշարժի ապահովումը
7. Բնակչությանը մատուցվող ծառայությունների պարզեցումը և որակի էական բարելավումը էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործումը
8. Մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության, իսկ մշակույթի տան՝ ամբողջական հիմնանորոգման աշխատանքների ավարտի ապահովումը
9. Առողջ ապրելակերպի խրախուսումը՝ այդ նպատակով նպաստավոր պայմանների ստեղծում գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը միջազգային համագործակցության ընդլայնումը, քույր և գործընկեր քաղաքների հետ արդյունավետ համագործակցության ակտիվացումը,

3. ՀԱՄԱՅՆՔԻ՝ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

3.1. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնահարցեր

- Քաղաքին յուրահատուկ կոլորիտի կորստյան վտանգ
- Անբարեկարգ բակային տարածքներ
- Բնակչության համար նոր հանգստի գոտիների ստեղծում
- Քաղաքի տարածքում առկա սողանքային երևույթներ
- Արտաքին լուսավորության ցանցի մաշվածություն
- Կանգառասրահների կահավորվածության ոչ բավարար վիճակ

Նպատակ

Ապահովել համայնքի կայուն քաղաքաշինական ներդաշնակ զարգացում:

Խնդիրներ

1. Նոր զբոսայգիների հիմնադրում և կանաչ տարածքների վերականգնում
2. Նոր մանկական խաղահրապարակների և բացօթյա սպորտային հրապարակների ստեղծում
3. Բնակելի թաղամասերի բակային տարածքների բարեկարգում,
4. Շուկայական առևտուրը և սպասարկումը ավելի քաղաքակիրթ, հարմարավետ դարձնելու համար համապատասխան առանձնացված տարածքներում տեղադրել քաղաքաշինական նորմերին և սանիտարահիգիենիկ պահանջներին բավարարող առևտրի տաղավարներ կամ շարժական ցուցափեղկեր
5. Բակային տարածքների,կամուրջների, հենապատերի նկարազարդում և գեղագիտական ձևավորում
6. Հենապատերի կառուցում, վերականգնում և ձևավորում
7. Քաղաքային հասարակական տրանսպորտի կանգառների կառուցում, տեղեկատվական վահանակների տեղադրում
8. Ներհամայնքային երթուղիների սպասարկման համար ավտոբուսների ձեռքբերում
9. Քաղաքի կենտրոնական հրապարակի հիմնանորոգում, արդիականացում
10. Մյասնիկյան 66 հասցեի վարչական շենքի գլխավոր ճակատի և ներքին ենթակառուցվածքների արդիականացում
11. Ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում
12. Քաղաքի տոնական ձևավորման տարրերի ձեռք բերում, մոնտաժում և տեղադրում
13. Սողանքային երևույթների դեմ պայքարի միջոցառումների իրականացում

14. Թախտա թաղամասի ասֆալտապատում
15. Ճանապարհների նշագծում, կահավորում
16. Հեռագնա արոտներ տանող ճանապարհների վերանորոգում
17. Դեպի գերեզմանատներ տանող ճանապարհների հիմնանորոգում
18. Հաղարծին բնակավայրում Աղստև գետի երկու ափերը միացնող հետիոտնային կամրջի վերանորոգում
19. Դիլիջան խոշորացված համայնքում՝ այդ թվում Թեղուտ, Հաղարծին, Գոշ, Խաչարձան, Աղավնավանք Հովք գյուղական բնակավայրերում, փողոցային լուսավորության համալրում
20. Խաչարձան և Աղավնավանք գյուղերի հանդիսությունների սրահի վերանորոգում
21. Քաղաքի երեք հիմնական մուտքերի արդի կահավորում և նշանների տեղադրում
22. Քաղաքի գերեզմանատների մուտքի կահավորում և նշանների տեղադրում

3.2. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հիմնահարցեր

- Բազմաբնակարան շենքերի տանիքների, տանիքների ջրհորդանների, շենքերը սնուցող ջրագծերի, կոյուղագծերի, շքամուտքերի անբավարար վիճակ:
- Բնակչությանը մատուցվող ծառայությունների ցածր մակարդակ:
- Փողոցների սանմաքրման վատ վիճակ:
- Մակերեսային ջրերի հեռացման և հակասողանքային կառուցվածքների անբավարար վիճակ:
- Ջրամատակարարման համակարգի անբավարար վիճակ:
- Գերեզմանատների պահպանության անբավարար վիճակ:
- Հիմնական բնակարանային ֆոնդի մաշվածություն
- Մատչելի բնակարանների բացակայություն երիտասարդ ընտանիքների համար
- Շահագործման և պահպանման մեխանիզմների բացակայություն
- Բազմաբնակարան շենքերի սեփականատերերի իրավունքների և պարտականությունների իրազեկվածության ցածր մակարդակ
- Շենքերի տեխնիկական անձնագրավորման բացակայություն

Նպատակ

Բարելավել համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների և ենթակառուցվածքների վիճակը: Ապահովել բնակչությանը մատուցվող ծառայությունների բարձր մակարդակ:

Խնդիրներ

19. Շամախյան և Թախտա թաղամասերի բազմաբնակարան բնակելի շենքերի շքամուտքերի վերանորոգում
20. Սանիտարական մաքրման և աղբահանության բարեփոխումների իրականացում
21. Նոր աղբահավաք մեքենաներով և տեխնիկայով վերազինում
22. Աղբավայրի արտոնագրում, ցանկապատում, աղբատար մեքենաների աղտահանման պայմանների ստեղծում
23. Գերեզմանատների բարեկարգում և հսկողություն
24. Շենքերի տեխնիկական անձնագրավորման աշխատանքներ
25. Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում
26. Բնակելի շենքերի վերելակների ամենամյա տեխնիկական անվտանգության փորձաքննություն
27. Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման որակի բարելավում, ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի ընդլայնում
28. Ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերի հետագա շահագործման խնդիրների կարգավորում
29. Չլուսավորվող փողոցների, նրբանցքների, բակերի և խաղահրապարակների լուսավորում
30. Լուսավորության ցանցի ավտոմատացման, նոր տրանսպորտա-տեխնիկական սարքավորումների, գործիքների և այլ տեխնիկական միջոցների ներդրում, ավտոամբարձիչների ձեռքբերում
31. Լուսավորության համակարգի սպասարկում
32. Թափառող շների հարցը

3.3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հիմնահարցեր

- Գյուղացիական տնտեսությունների անբավարար վիճակ:
- Տեխնիկայի սակավություն
- Ցածր բերքատվություն՝ տարիներ շարունակ հողը չպարարտացնելու պատճառով:
- Հանդամիջյան ճանապարհների ոչ բարվոք վիճակ:
- Տոհմային անասնապահության բացակայություն:
- Գյուղմթերքների իրացման և վերամշակման հնարավորությունների բացակայություն:

Նպատակ

Գյուղատնտեսությամբ զբաղվող բնակչության համար ստեղծել ներհամայնքային բավարար պայմաններ:

Խնդիրներ

33. Գյուղմթերքների վերամշակմամբ և անասնապահությամբ զբաղվող քաղաքացիների համար կազմակերպել սեմինար-դասընթացներ՝ կատարվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
34. Կերային բազայի ամրապնդում, ցանովի խոտաբույսերի ցանքատարածությունների ընդլայնում, մշակաբույսերի նոր տեսակների ներդրում:
35. Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերում, տեխնիկական վերազինում
36. Գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծում

3.4. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հիմնահարցեր

- Համայնքի մանկապարտեզների շենքերի, բակերի, խաղահրապարակների հիմնանորոգման անհրաժեշտություն, գույքի, մեթոդական և ծրագրային նյութերի պակաս:
- Առկա իրավիճակի պահպանման և զարգացման անհրաժեշտություն:

Նպատակ

Բարելավել մանկապարտեզներում հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման որակը, ապահովել նախադպրոցական կրթության ոլորտի պետական քաղաքականության իրականացումը:

Խնդիրներ

37. Բարձրացնել նախադպրոցական հաստատությունների որակն ու դերը
38. Վերանորոգման կարիք ունեցող մանկապարտեզների շենքերի մասնակի վերանորոգում և հիմնանորոգում:
39. Գույքի նորացում, ինչպես նաև նորագույն տեխնոլոգիաների հնարավորինս ներդրում մանկապարտեզներում:
40. 4 գյուղերի (Գոշ, Աղավնավանք, Խաչարձան, Հովք) համար կառուցել մանկապարտեզներ

41. Հաղարծին գյուղում մանկապարտեզի մասնաշենքերի սեյսմակայունության ուղղությամբ միջոցառումների իրականացում
42. Երիտասարդական-մշակութային կենտրոնների հիմնում խոշորացված համայնքի բնակավայրերում ու Դիլիջանի ծայրամասային թաղամասերում

3.5. ՄՇԱԿՈՒՅԹ

Հովի. Շարամբեյանի անվան գեղարվեստի մանկական դպրոց

Հիմնահարցեր

- Առկա իրավիճակի պահպանման և զարգացման անհրաժեշտություն:

Նպատակ

Բարելավել երեխաների գեղագիտական դաստիարակության կազմակերպումն ու կրթական ծրագրերի իրականացման որակը:

Խնդիրներ

42. Գյուղական բնակավայրերում բացել գեղարվեստի դպրոցի մասնաճյուղեր
43. Պահպանել գեղարվեստի դպրոցի կողմից մատուցվող ծառայությունների առկա քանակը և որակը:
44. Պահպանել ու շարունակաբար ներկայացնել ոլորտի ավանդույթները

Մանկական երաժշտական դպրոց

Հիմնահարցեր

- Առկա իրավիճակի պահպանման և զարգացման անհրաժեշտություն:
- Մանկական երաժշտական դպրոցի անձնակազմի վերակազմավորում և մասնագիտական վերազինում

Նպատակ

Բարելավել երաժշտական կրթության ապահովման պայմանները և կազմակերպումը, բարձրացնել դպրոցի կողմից մատուցվող ծառայությունների որակը:

Խնդիրներ

44. Գյուղական բնակավայրերում բացել երաժշտական դպրոցի մասնաճյուղեր

45. Պահպանել երաժշտական դպրոցի կողմից մատուցվող ծառայությունների առկա քանակը և որակը:
46. Ձևավորել ու զարգացնել մանկական վոկալ-գործիքային անսամբլային մշակույթը

Դիլիջանի գրադարանների կենտրոնացված համակարգ

Հիմնահարցեր

- Գրադարանի շենքային պայմանների բացակայություն
- Գրադարանի անձնակազմի վերակազմավորում և մասնագիտական վերազինում
- Նոր գրականության բացակայություն:
- Անհրաժեշտ գույքի և գրադարանային սարքերի ու պարագաների պակաս:
- Առկա իրավիճակի պահպանման և զարգացման անհրաժեշտություն:
- Թվային տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ ընթերցողների թվի նվազում

Նպատակ

Բարելավել բնակչության գրադարանային-մատենագիտական սպասարկման մակարդակը:

Խնդիրներ

46. Ավելացնել գրքերի քանակը 5 տարվա ընթացքում գրքային ֆոնդի 5 տոկոսի չափով:
47. Ձեռք բերել գույք
48. Պահպանել գրադարանի կողմից մատուցվող ծառայությունների առկա քանակը և որակը

Մշակույթի պալատ

Հիմնահարցեր

- Պալատի շենքի հիմնանորոգում
- Մշակույթի պալատի անձնակազմի վերակազմավորում և մասնագիտական վերազինում
- Գույքի անբավարար վիճակ
- Ջեռուցման բացակայություն
- Առկա իրավիճակի պահպանման և զարգացման անհրաժեշտություն:

Նպատակ

Զարգացնել քաղաքի մշակույթային կյանքը:

Խնդիրներ

53. Վերանորոգել մշակույթի պալատի շենքը՝ կառուցելով լոկալ կաթսայատուն ջեռուցման նոր համակարգով, համալրել նոր գույքով
54. Գյուղերում ստեղծել հասարակական միջոցառումների և նախաձեռնությունների սրահ
55. Պահպանել մշակույթի պալատի կողմից մատուցվող ծառայությունների առկա քանակը և որակը:

Երկրագիտական թանգարան

Հիմնահարցեր

- Առկա իրավիճակի պահպանման և զարգացման անհրաժեշտություն:

Նպատակ

Թանգարանն ընդգրկել հանրապետության զբոսաշրջության տարբեր երթուղիներում, այն դարձնել հետաքրքրաշարժ և գրավիչ:

Խնդիրներ

56. Թանգարանի ընթացիկ նորոգման աշխատանքներ
57. Պահպանել երկրագիտական թանգարանի կողմից մատուցվող ծառայությունների առկա քանակը և որակը:

Զբոսաշրջություն

Հիմնահարցեր

- ՏԻՄ-ում զբոսաշրջության ոլորտով զբաղվող պատասխանատու բաժնի կամ մասնագետի բացակայություն
- Համայնքի զբոսաշրջային զարգացման տեսլականի բացակայություն
- Համայնքի զբոսաշրջային դիմագծի բացակայություն /բրենդինգ/
- Տեսարժան վայրերի սահմանափակ քանակ:
- Հյուրընկալության ոլորտի մասին հավաստի և ամբողջական տեղեկատվության պակաս:
- Կողմնորոշումը ամառային հանգստի վրա:
- Ժամանցի և զվարճությունների վայրերի բացակայություն:
- Մշակութային միջոցառումների կազմակերպման և տարածման մասին տեղեկատվության պակաս
- Քաղաքում տեղեկատվական կետերի բացակայություն
- Հայաստանի սահմաններից դուրս պատշաճ ներկայացման բացակայություն

Նպատակ

Պահպանել զբոսաշրջային գրավչությունները, վերականգնել հյուրասիրության ավանդույթները, բարելավել հյուրընկալման ծառայությունների որակը, թաղամասերը, զբոսաշրջային կառույցները և ենթակառուցվածքները, խրախուսել մասնավոր հատվածի մասնակցությունը զբոսաշրջության ոլորտում: Դիլիջանը դարձնել հանրապետական երիտասարդական միջոցառումների կենտրոն:

Խնդիրներ

58. Հիմնել համայնքային զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն Դիլիջանի և հարակից տարածքների համար
59. Ստեղծել այցելուների կենտրոն Դիլիջանի ազգային պարկում,
60. Զարգացնել վեբ և մոբայլ հավելվածները՝ զբոսաշրջության ոլորտի խթանման համար
61. Վերանորոգել թեմատիկ երթուղիներ
62. Վերազինել Ազգային պարկի երթուղիները ցուցանակներով
63. Ստեղծել Արհեստների կենտրոն
64. Կազմակերպել հմտությունների զարգացման դասընթացներ արհեստների կենտրոնում
65. Ստեղծել Ագրոշուկա
66. Մշակել ուղեցույցներ
67. Իրականացնել կարողությունների զարգացման դասընթացներ
68. Քույր և գործընկեր քաղաքների հետ համագործակցության ընդլայնում
69. Ստեղծել և տարածել տուրիզմին և բիզնեսին վերաբերվող ամբողջական տեղեկատվական բազա
70. Պատրաստել գովազդային հոլովակներ, տպագրել բուկլետներ և արտաքին գովազդային պաստառներ
71. Կառուցել բազմաֆունկցիոնալ կանգառներ տեղացի արհեստավորների և փոքր ձեռնարկատերերի համար, տրամադրել տարածք, որտեղ նրանք կարող են ցուցադրել իրենց աշխատանքները և վաճառել իրենց արտադրանքը
72. Բարեկարգել երթուղիները և տեղադրել զբոսաշրջիկներին կողմնորոշող ցուցանակներ:
73. Ունենալ վերապատրաստված ուղեկցողներ և գիդեր, զբոսաշրջիկներին դիմավորող անձնակազմ, թարգմանիչներ և գրասենյակային այլ ծառայություններ
74. Փողոցներում կողմնորոշող ցուցանակների տեղադրում առավել կարևորություն ներկայացնող տեսարժան վայրերի նկարներով, մատնանշելով ճանապարհային ուղղությունները

75. Զբոսաշրջության միջազգային օրվա ամենամյա նշում և միջոցառումների կազմակերպում

3.6. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐ

Հիմնահարցեր

- Թույլ գույքային բազա:
- Անձնակազմ
- Առկա իրավիճակի պահպանման և զարգացման անհրաժեշտություն:

Նպատակ
Ապահովել քաղաքի մարզական կյանքի բնականոն զարգացումը:

Խնդիրներ

76. Նոր մարզագույքի ձեռք բերում
77. Մարզադպրոցի անձնակազմի վերակազմավորում և մասնագիտական վերազինում
78. Քաղաքի երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի լայն տարածմանը նպատակաուղղված զանգվածային մշակութային, մարզական միջոցառումների կազմակերպում
79. Գյուղական բնակավայրերում բացել սպորտային խմբակներ
80. Պահպանել մարզահամալիրի կողմից սաներին մատուցվող ծառայությունների առկա քանակը և որակը:

3.7. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Հիմնահարցեր

- Համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցման անհրաժեշտություն
- Համայնքում սոցիալապես անապահով ընտանիքների մասին տեղեկատվական բազայի բացակայություն կամ թերի վիճակ
- Հաշմանդամների սոցիալական ինտեգրման ծրագրերի ոչ բավարար քանակ:
- Հաշմանդամություն ունեցող անձանց մասին տեղեկատվության բազայի բացակայություն կամ թերի վիճակ
- Զբաղվածության խնդիրների աստիճանական կարգավորման և գործազրկության մակարդակի նվազում

- Պատերազմական գործողությունների մասնակցած անձանց կամ զոհվածների մասին տեղեկատվական բազայի բացակայություն կամ թերի վիճակ

Նպատակ

Նպաստել սոցիալական խնդիրների լուծմանը համայնքում:

Խնդիրներ

80. Հայրենական մեծ պատերազմի վետերաններին ամենամսյա նպաստների վճարում
81. Պարենային աջակցության ծրագրեր՝ միայնակ տարեցների, հաշմանդամների, բազմազավակ և կարիքավոր ընտանիքների համար
82. Ստեղծել համայնքային շուրջօրյա խնամքի տուն:
83. Տարեցներին տրամադրել կոմունալ-կենցաղային աջակցություն:
84. Օժանդակություն կցուցաբերվի ազատամարտիկներին, Հայաստանի Հանրապետության և Արցախյան պատերազմների ընթացքում զոհված, վիրավորում ստացած և անհայտ կորած զինվորների ընտանիքներին
85. Կազմակերպել մեծարման երեկոներ՝ նվիրված պատերազմի վետերաններին, վաստակաշատ մարդկանց:
86. Դեկտեմբերի 3-ին՝ հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ հաշմանդամների խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններին օժանդակության ցուցաբերում
87. Կարիքավորության գնահատման համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար Ամանորի կապակցությամբ նվերների տրամադրում
88. Դրամական օժանդակություններ սոցիալական գործընկեր ՀԿ-ներին՝ համատեղ ծրագրերի իրականացում
89. Նորածին երեխաների համար ընտանիքին տրվող միանվագ դրամական օգնություն

3.8. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնահարցեր

- Կառավարման ապարատի պահպանման և զարգացման անհրաժեշտություն:
- Բնակչության որոշ մասի անտեղյակություն իր հարկային պարտավորությունների մասին:
- ՏԻՄ-բնակչություն թույլ կապ:
- Եկամուտների հավաքագրման անբավարար մակարդակ և հաշվառման բացթողումներ:

- Գույքահարկի և հողի հարկի բազայի անճշտությունների առկայություն:

Նպատակ

Կազմակերպել և վերահսկել համայնքի բնականոն գործունեությունը: Բարելավել բնակչությանը տրվող տեղեկատվության մակարդակը, ակտիվացնել ՏԻՄ-ի և բնակչության կապը, համայնքապետարանի աշխատանքը դարձնել թափանցիկ ու հասկանալի:

Խնդիրներ

90. Օգտագործելով տեղական լրատվության միջոցները՝ իրազեկել ազգաբնակչությանը համայնքի բյուջեի ձևավորման գործընթացում իր հարկային պարտավորությունների կատարման նշանակության մասին:
91. Համայնքային թերթի տպագրում
92. Լուսաբանել համայնքի ղեկավարի և ավագանու գործունեությունը
93. Աշխատակիցների վերապատրաստում, հանդիպումների կազմակերպում, տեղեկատվական թերթիկների պատրաստում
94. Գույքի, սարքավորումների ձեռք բերում
95. Պահպանել կառավարման ապարատի առկա իրավիճակը
96. Տարեմուտի, Բանակի օրվան, Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի օրվան, Երեխաների պաշտպանության միջազգային օրվան և Կանանց միջազգային տոնին, Հայաստանի անկախության օրվան նվիրված ամենամյա մշակութային միջոցառումների իրականացում
97. Քաղաքի օրվա միջոցառման կազմակերպում, քաղաքի երաժշտական դրպոցի, Գեղարվեստի դպրոցի սաների մասնակցությամբ, ցուցադրելով նրանց աշխատանքները, ֆոտոցուցահանդեսի կազմակերպում «Իմ քաղաքը» թեմայով, հետաքրքիր միջոցառումների շարք, որը կավարտվի բացօթյա ամֆիթատրոնում երեկոյան համերգով և հրավառությամբ
98. Քաղաքապետարանում ստեղծել «թեժ գիծ» զբոսաշրջիկների առաջարկների և գանգատների համար
99. Շարունակել համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ՝ ֆինանսական միջոցների ներգրավում, դրամաշնորհային ծրագրերի մասնակցություն.
100. Տարին ամփոփելու համար կազմակերպել ամենամյա մրցույթ, որտեղ համապատասխան ժյուրին կորոշի քաղաքի տարվա լավագույն ռեստորանային համալիրը, հյուրանոցը, առևտրի սպասարկման օբյեկտը և այլն:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Աղյուսակ 2. Համայնքի 2022թ. Բյուջեի մուտքերի նախատեսված ցուցանիշները և 2023-2027թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը՝ հազար դրամ

Հ/հ	Մուտքերի ասնվանումը	2022թ. Նախատ.	2023թ.. Կանխ.	2024թ.. Կանխ..	2025թ. Կանխ.	2026թ. Կանխ.	2027 Կանխ.
1	2	3	4	6	7	8	
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**1067888.0**	**1099924.0**	**1121282.0**	**1142640.0**	**1163997.0**	**1174677.0**
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	**201913.0**	**207970.2**	**212008.6**	**216046.8**	**220085.0**	**224123.8**
1.1	**Գույքային հարկեր անշարժ գույքից**	**98263.0**	**101210.8**	**103176.1**	**105141.4**	**107106.6**	**109072.4**
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	**4060.0**	**3000.0**	**2000.0**	**1000.0**	**1000.0**	**0**
	Հողի հարկ	**12285.0**	**8000.0**	**6000.0**	**4000.0**	**2000.0**	**0**
	Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ	**81918.0**	**90210.8**	**95176.1**	**100141.4**	**104106.6**	**109072.4**
1.2	**Գույքային հարկեր այլ գույքից**	**80868.0**	**83294.0**	**84911.4**	**86528.7**	**88146.1**	**89763.4**
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	**80868.0**	**83294.0**	**84911.4**	**86528.7**	**88146.1**	**89763.4**
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	**17382.0**	**17903.4**	**18251.1**	**18598.7**	**18946.3**	**19294.0**
	Տեղական տուրքեր	**17382.0**	**17903.4**	**18251.1**	**18598.7**	**18946.3**	**19294.0**
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ	**5400.0**	**5562.0**	**5670.0**	**5778.0**	**5886.0**	**5994.0**
2.	**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ**	**686379.8**	**706971.1**	**720698.7**	**734426.3**	**748153.8**	**761881.5**
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ						
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ						
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	**6868379.8**	**706971.1**	**720698.7**	**734426.3**	**748153.9**	**761881.5**
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	**681475.5**	**701919.7**	**715549.2**		**742808.2**	**756437.8**

					729178.7		
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ						
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	**4904.3**	**5051.4**	**5149.5**	**5247.6**	**5345.6**	**5443.7**
2.6	Պետական բյուջեից տրամադրվող կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ						
3.	**ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ***	179595.2	**184983.0**	**188574.7**	**192166.9**	**195758.2**	**188671.7**
3.1	Տոկոսներ						
3.2	Շահաբաժիններ						
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	**56399.2**	**58091.1**	**59219.1**	**60347.1**	**61475.1**	**62603.1**
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ	18930.0	**20291.1**	**20559.1**	**21277.1**	**21625.1**	**21603.1**
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ	**2294.7**	**2500.0**	**3250.0**	**3500.0**	**3750.0**	**4000.0**
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ	**19735.0**	**19800.0**	**19850.0**	**20000.0**	**20500.0**	**21000.0**
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	**15439.5**	15500.0	15560.0	15570.0	15600.0	16000.0
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում						
	Պետության կողմից ՏԻՄ-երին Պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ						
	Վարձատրվող հասարակական աշխատանքներ						
3.5	Վարչական գանձումներ	**119196.0**	**121892.0**	**124355.6**	**131819.8**	**131283.1**	**123068.6**
	Տեղական վճարներ	**114196.0**	**114892.0**	**117355.6**	**131819.8**	**131283.1**	**123068.6**
	Համայնքի վարչականտարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	**5000.0**	**7000.0**	**7000.0**	**0**	**0**	**0**
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից	**4000.0**	**5000.0**	**5000.0**	**3000.0**	**3000.0**	**3000.0**
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	**4000.0**	**5000.0**	**5000.0**	**3000.0**	**3000.0**	**3000.0**

4.	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	**500913.3**					

Ոլորտային կապիտալ ծրագիր

Մշակույթ
(Ոլորտի անվանումը)

«Դիլիջանի մշակույթի պալատ» ՀՈԱԿ շենքի հիմնանորոգում

(Ծրագրի անվանումը)

Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի ընդհանուր արժեքը - **283015.100** -հազար դրամ, որից համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը կազմում է - **169809.060 -** հազ. դրամ:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Նախահաշիվների կազմում												
2.	Գնման գործընթացի կազմակերպում												
3.	Հիմնանորոգման աշխատանքներ												
4.	Արդյունքներիգնահատում												

«Դիլիջանի Հովհ. Շարամբեյանի անվան գեղարվեստի մանկական դպրոց» ՀՈԱԿ շենքի հիմնանորոգում

(Ծրագրի անվանումը)

Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի ընդհանուր արժեքը - **400000.0** հազար դրամ, որից համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը կազմում է - **240000.0** հազ. դրամ:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Նախահաշիվների կազմում												

2.	Գնման գործընթացի կազմակերպում												
3.	Հիմնանորոգման աշխատանքներ												
4.	Արդյունքներիգնահատում												

<u>Արևային ՖՎ կայանների կառուցում</u>

Դիլիջան խոշորացված համայնքի ենթակայության ՀՈԱԿ-երի (Մարզադպրոց, Երաժշտական դպրոց, Երկրագիտական թանգարան, Թեղուտի ակումբի շենք, թիվ 1 մանկապարտեզ, թիվ 2 մանկապարտեզ, թիվ 3 մանկապարտեզ, Հաղարծնի մանկապարտեզ) արևային ՖՎ կայանների կառուցում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է մոտ 45 000 000 ՀՀ դրամ, որից համայնքի կողմից ներդրվող գումարի չափը կազմում է 4 500 000 ՀՀ դրամ կամ 10%:

Հ/h	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Նախահաշիվների կազմում												
2.	Գնման գործընթացի կազմակերպում												
3.	Հիմնանորոգման աշխատանքներ												
4.	Արդյունքներիգնահատում												

Ոլորտային կապիտալ ծրագիր

<u>Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն</u>
<u>(Ոլորտի անվանումը)</u>

<u>Դիլիջան համայնքի Մյասնիկյան 37/2 հասցեից մինչև Մյասնիկյան 117/4 ճանապարհահատվածի հիմնանորոգում</u>

Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի ընդհանուր արժեքը - **660000.0** -հազար դրամ, որից համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը կազմում է
- **396000.0 -** հազ. դրամ:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/h	Ծրագրի իրականացման	Ամիսներ

	քայլերը / գործողությունները	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Նախահաշիվների կազմում												
2.	Գնման գործընթացի կազմակերպում												
3.	Հիմնանորոգման աշխատանքներ												
4.	Արդյունքներիգնահատում												

<u>Դիլիջան համայնքի Կամարինի 1 հասցեից Օրջոնիկիձե 57-Կամարինի 37 հասցեի ճանապարհահատվածի հիմնանորոգում</u>

Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի ընդհանուր արժեքը - **290000.0** -հազար դրամ, որից համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը կազմում է
- **174000.0 -** հազ. դրամ:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/Հ	Ծրագրիիրականացման քայլերը / գործողությունները	Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Նախահաշիվների կազմում												
2.	Գնման գործընթացի կազմակերպում												
3.	Հիմնանորոգման աշխատանքներ												
4.	Արդյունքներիգնահատում												

Ոլորտային կապիտալ ծրագիր

<u>Գյուղատնտեսություն</u>
(ոլորտի անվանումը)

ՀՀ խոշորացված համայնքներում համավարակի բացասական ազդեցության մեղմանն ուղղված դրամաշնորհային հիմնադրամի, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության և Գերմանիայի միջազգային համագործակցության հետ համատեղ «Դիլիջան համայնքում տաղավարների հիմնում՝ գյուղատնտեսական ապրանքների վաճառքի համար» ծրագրի իրականացում, որի ընդհանուր բյուջեն կազմում է 7.733.000 ՀՀ դրամ, համայնքի կողմից ներդրվող գումարը 1.624.000 ՀՀ դրամ:

Հ/Հ	Ծրագրիիրականացման	Ամիսներ

	քայլերը / գործողությունները	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Նախահաշիվների կազմում												
2.	Գնման գործընթացի կազմակերպում												
3.	Հիմնանորոգման աշխատանքներ												
4.	Արդյունքների գնահատում												

Ոլորտային կապիտալ ծրագիր

<u>Բնակարանաշինություն</u>
(ոլորտի անվանումը)

Դիլիջան համայնքում իրականացվում է թվով 11 բազմաբնակարան շենքերի վերանորոգում և էներգաարդյունավետ արդիականացման ծրագիր, որի ընդհանուր բյուջեն կազմում է 669.876.147 ՀՀ դրամ, որից համայնքի կողմից ներդրվող գումարի չափը կազմում է 234.456.651 ՀՀ դրամ, ՄԱԿ-ի կողմից 167.469.037 ՀՀ դրամ, իսկ պետբյուջեից տրվող սուբվենցիան 267.950.459 ՀՀ դրամ: (Ծրագիրը ընթացքի մեջ է):

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Հավելված թիվ 1
Դիլիջան համայնքի ավագանու
2021 թվականի դեկտեմբերի
29-ի թիվ 044-Ա որոշման

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին
2. Քաղաքաշինության և հողաշինության բաժին

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

1. Վարչական շենք /համայնքապետարան/
2. Վարչական շենք /նախկին քաղխորհրդի գործկոմի շենք/
3. «Դիլիջանիթիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ
4. «Դիլիջանիթիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ
5. «Դիլիջանիթիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ
6. «Դիլիջանիթիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ
7. «Դիլիջանիթիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ
8. «Դիլիջանիթիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ
9. Հաղարծնի մանկապարտեզ ՀՈԱԿ
10. Թեղուտի մանկապարտեզ ՀՈԱԿ
11. «Դիլիջանի Հովհաննես Շարամբեյանի անվան մանկական գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ
12. «Դիլիջանի մշակույթի պալատ» ՀՈԱԿ
13. «Դիլիջանի կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ
14. «Դիլիջանի համայնքապետարանի մարզահամալիր» ՀՈԱԿ
15. «Դիլիջանի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ
16. «Դիլիջանի երկրագիտական թանգարան» ՀՈԱԿ
17. Հանգստի գոտիներ
18. Հուշարձաններ
19. Սոցիալ-կենցաղային նշանակության այլ շենքեր և շինություններ
20. Պետական բնակելի ֆոնդ և պետական ոչ բնակելի տարածքներ
21. Ներհամայնքային նշանակության ջրամատակարարման համակարգ
22. Ներհամայնքային նշանակության ջրահեռացման համակարգ
23. Ներհամայնքային նշանակության ոռոգման համակարգ
24. Ներհամայնքային փողոցներ և հրապարակներ
25. Ներհամայնքային նշանակության ճանապարհներ
26. Ներհամայնքայինկ ամուրջներ
27. Տրանսպորտային միջոցներ
28. Համայնքային աղբավայր
29. Գերեզմանատներ

Հաղարծին

1. Վարչական շենք
2. Սպորտդահլիճ
3. Տեխնիկական սպասարկման կետ
4. Ներհամայնքային նշանակության խմելու ջրատարաներ և ջրամբարներ

/ջրամատակարարման համակարգ/
5. Փողոցային լուսավորության ցանց
6. Կուլտուրայի տուն
7. Հաղարծնի մանկապարտեզ ՀՈԱԿ
8. ՕԿՋ ջրամբար 300 տն.
9. Արտադրական կիսակառույց շենք

Թեղուտ
1. Մշակույթի շենք
2. Փոստի շենք
3. Սպասասրահ
4. Մարզահրապարակ
5. Թեղուտի մանկապարտեզ ՀՈԱԿ
6. Ներհամայնքային նշանակության խմեու ջրատարներ /ջրամատակարարման համակարգ/
7. Ներհամայնքային նշանակության ջրահեռացման համակարգ և կոյուղագիծ
8. Ներհամայնքային նշանակության կամուրջ
9. Ներհամայնքային նշանակության հենապատ
10. Հուշարձան և խաչքար
11. Գերեզմանատուն /ցանկապատ/

Գոշ
1. Գյուղապետարանի շենք
2. Բաղնիքի շենք
3. Ակումբ-գրադարանի շենք
4. Ներհամայնքային նշանակության ջրամատակարարման ցանց

Խաչարձան
1. Գյուղապետարանի շենք
2. Ֆիննական տնակ
3. Բուժկետ և բազմաֆունկցիոնալ սրահ՝ ջեռուցման համակարգով

Աղավնավանք
1. Գյուղապետարանի շենք
2. Ակումբի շենք
3. Ներհամայնքային նշանակության ջրագծեր

Հովք
1. Գյուղապետարանի շենք
2. Փողոցային լուսավորության ցանց
3. Գազատար ցանց